

## ԱՊՐԻԼ 24-ԵԱՆ ԽՈՐԵՐ

Այս օրերուն, համայն հայութիւնը պիտի նշէ Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցը ու Հայաստանէն մինչեւ աշխարհի ամենափոքր գաղթօճակը զանազան ձեւերով պիտի ոգեկոչեն մեր ամեն զոհերու յիշատակը: Այդ ձեւերով պիտի ընթացին կամ մամուլով վստահարար պիտի հնչեն արդար ու իրաւացի դատապարտումներ նախ եւ առաջ թրքական պետութեան հասցէին, որ առ այսօր չանփչի խնայելու արանալու ցեղասպանութեան փաստն ու խեղաթիւրելու պատմութիւնը իր կեղծ պատմաբաններու կամ վարձկաններու միջոցով: Քննադատութիւններ պիտի ըլլան նաեւ ԱՄՆ նախագահի հասցէին, որ ամենայն հաւանականութեամբ Ապրիլ 24-ի առօրէ կատարելիք իր յայտարարութեան մէջ կրկին պիտի խոստովանուի ցեղասպանութիւնը քառք օգտագործելէ, այս անգամ եւս պատմաբանարարներու քիւններու քարելումն առնելու քեամբ ու հետեւաբար պիտի չուզէ առնել քայլ մը, որ կրնայ շիկացնել մթնոլորտը այդ պիտի աւելի խորացնել երկու երկիրներուն միջեւ ներկայ լարուածութիւնը:

Անտարակոյս, Հայաստան-Թուրքիա Արձանագրութիւններու պարագան ամբողջապէս յեղաշրջեց ցեղասպանութեան նախնական գործընթացը: Եթէ անցեալին, Ամերիկայի նախագահներու՝ Ցեղասպանութիւնը քառք չարտասանելը գլխաւորաբար կը հիմնաւորուէր այն պատրուակով, որ դաշնակից Թուրքիան վշտացնելու պարագային, այդ տարածաշրջանի մէջ կրնային վնասուիլ ԱՄՆ-ի կենսական շահերը, ապա այսօր այդ հիմնաւորումը փոխարինուած է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման հրամայականով:

Ի հարկ, ցանկալի է որ, ԱՄՆ նախագահը օգտագործէ «ցեղասպանութիւն» քառք, սակայն պէտք է ողջախոհութիւնը ունենալ գիտակցելու, որ այդ քառք արտասանումով երկիրներէն մանաւանդ պիտի չբախտուի յանկարծ հայկական հարցը պիտի չլուծուի, ընդհակառակը, կը բուռն, որմեմ պէտք է եղածէն շատ աւելի կարեւորութիւն տուած ենք այդ հանգամանքին, թոյլ տալով, որ այդ երեւոյթը իշխէ մեր մտածողութեան վրայ մեզ շեղելով այլ կարեւոր

Շաբ.ը էջ 19

## ՀԱԽ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԽՈՐՐՈՂԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ԵՂԵՆԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ



Հայ Ամերիկեան Խորհուրդի եւ Արեւմտեան Ամերիկայի Թեմի ներկայացուցիչները Չարլզ Գալտերոնի, Մայք Կաթօի եւ Յովնան Արք. Տէրտէրեան հետ

ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) ներկայացուցիչները Ապրիլ 14-ին Մաքրամէնթի մէջ ներկայ գտնուեցան Գալտերոնի Նահանգային Խորհրդարանին ներս տեղի ունեցած՝ Հայկական Ցեղասպանութեան տարեկան յիշատակման, որուն ներկայ էին նաեւ Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Ամերիկայի Թեմի եւ հայկական այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Խորհրդարանի դահլիճէն ներս տեղի ունեցող արարողութիւնը կը

գլխաւորէին մեծամասնութեան ղեկավար Չարլզ Գալտերոն (Դեմոկրատ, Մոնթեպելլոյն) եւ Խորհրդարանի անդամներ՝ Մայք Կաթօ (Դեմոկրատ, Լոս Անճելոսէն), Խաչօ Աթշատեան (Հանրապետական, Ման Լուիս Օպիսպոյն) եւ Անթոնի Փորթանթիւն (Դեմոկրատ, Փասատինայէն):

Մայք Կաթօ նախ հրաւիրեց Արեւմտեան Ամերիկայի Թեմի առաջնորդ Յովնան Արք. Տէրտէր-

Շաբ.ը էջ 4

## ԵՆԽՎ-Ի ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՔԱՅԼԵՐԸ ԲԱԴԱՐԱՐ ՉԵՆ

Ապրիլ 15-ին Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) Ուսումնասիրող Յանձնաժողովի համագեղակցողներ՝ Ակսել Ֆրիշըր (Գերմանիա) եւ Ճոն Փրեսկոտ (Միացեալ Թագաւորութիւն) հանդէս եկած են յայտարարութեամբ՝ ընտրական բարեփոխումներու, ինչպէս նաեւ դատական ու ոստիկանական համակարգի բարեփոխումներու հարցով Հայաստանի իշխանութիւններուն կողմէ իրականացուած թիւններէն անցնել գործողութիւններու:

ԵՆԽՎ-ի կայքէջին վրայ գետեղուած յայտարարութեան համաձայն, Մարտ 2008-ի դէպքերու ընթացքին դերակատարութիւն ունենալու համար որոշ մարդոց ձերբակալութիւնը, ինչպէս նաեւ տարբեր գոհերու մահուան պատճառներու պատշաճ հետաքննութեան բացակայութիւնը կը շարունակեն թունաւորել Հայաստանի քաղաքական միջավայրը եւ կրնան բացասական ազդեցութիւն ունենալ չաջորդ տարի կայանալիք ընտրութիւններուն վրայ:

ԵՆԽՎ հայաստանեան պատ-

ուիրակութեան ղեկավար Դաւիթ Յարութիւնեանի կարծիքով, համագեղակցողներու յայտարարութեան մէջ որեւէ արտառոց կամ անակնկալ գնահատական չկար: «Կարծում եմ, այն, ինչ որ գետեղուած էր համագեղակցողների վերջին հարցազրույցի մէջ, որեւէ մէկի համար գաղտնիք չէ», - յայտարարեց Դաւիթ Յարութիւնեան, աւելցնելով, որ որեւէ մէկը չի ժխտեր պատշաճ ընտրութիւններու իրականացման անհրաժեշտութիւնը: Ինչ կը վերաբերի համագեղակցողներու յայտարարութեան մէջ առկայ մարտիմէկեան իրադարձութիւններու բացառական եւ քաղաքականապէս անհիմն ազատ արձակման պահանջներուն, Դաւիթ Յարութիւնեան յայտնեց, թէ միամիտ պիտի ըլլար համագեղակցողներու պահանջները այդքան պարզ ներկայացնելը, ապա աւելցուց, որ երկրին մէջ բարեփոխումներու իրականացումը, ինչպէս նաեւ այդ պահանջներու կատարումը կը բխի Հայաստանի շահերէն եւ օրէնսդ-

Շաբ.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆ ԴՈՒՐՍՄԱՑ «ՀԱՁԱՐԱՄԵԱԿԻ ՄԱՐՏԱՅՐԱՒԵՐ» ԾՐԱԳԻՐԵՆ

Հայաստանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպան Մարի Եովանովիչ յայտարարեց, որ Հայաստան այս պահուն չի կրնար դիմել ամերիկեան «Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցութեան՝ նոր ծրագիրներու համար, քանի որ ընտրութիւններու եւ շարք մը այլ պատճառներով Հայաստանի ցուցանիշները չեն համապատասխաներ հիմնադրամի պահանջներուն:

Հայաստանի նախագահական վերջին ընտրութիւններէն յետոյ՝ 2008-ի Մարտի 11-ին (Մարտ 1-ի ողբերգական իրադարձութիւններէն յետոյ) «Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցութեան գործադիր տնօրէն Ճոն Դանիլովիչ Ռոբերտ Գոչարեանին նամակ ուղղած էր, ուր մասնաւորապէս գրուած էր. - «Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցութիւնը իրաւունք ունի կասեցնելու կամ դադարեցնելու Հայաստանի հետ կնքուած համաձայնագիրը, եթէ լուրջ քաղաքական հետքեր կան իրաւունքներու խախտման պաշտօնական գոչուցումէ, որ վերջին իրադարձութիւնները կրնան բացասական ազդեցութիւն ունենալ Հայաստանի՝ «Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցութեան կողմէ ֆինանսաւորման համապատասխանելուն վրայ»:

Դեսպան Եովանովիչ ըսաւ, թէ



Ամերիկայի դեսպան Մարի Եովանովիչ

ապագային թերեւս կարելի ըլլայ «Հազարամեակի Մարտահրաւէր» հիմնադրամի նոր ծրագիր իրականացնել Հայաստանի մէջ:

«Ամէն տարի կը քննարկուի, թէ տուեալ երկիրը կրնա՞յ դիմել: Այս պահուն Հայաստան չի կրնար դիմել երկրորդ ծրագրի համար, որոշ ցուցանիշներու պատճառով: Կը կարծեմ որ, այս նաեւ իմ փաստաթուղթի մէջ, որպէսզի աշխատանք իրականացուի այն ցուցանիշներու մասով, որոնք չեն համապատասխաներ հիմնադրամի պահանջներուն, մասնաւորապէս լաւատարմութեան ասպարէզին մէջ»- «Ազատութիւն» ռատիոկայանին յայտարարեց Ամերիկայի դեսպան Մարի Եովանովիչ:

## ՇՆՈՐՀԱՒՈՐ Ս. ԶԱՏԻԿ

Ս. Յարութեան յաղթական տօնին առիթով, «Մասիս» շաբաթաթերթը ջերմօրէն կը շնորհաւորէ իր ընթերցողներուն եւ համայն հայութեան Ս. Չատիկը:





ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՓՈՂԵՐ ՆԵՐԳՐԱԻԵԼՈՒ ՅԱՍԱՐ ԱՆՅՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՆԵՐՔԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

«Հազարամեակի Մարտահրա- ւէրներ» ծրագիրը Հայաստանի մէջ կախակալելու որոշման Ապրիլ 18- ին անդրադարձան փորձագէտ Անոյշ Սեդրակեանը եւ Կովկասի ուսում- նարանի տնօրէն Ալեքսանդր Իս- կանդարեանը:

«Մա այն ազդակն է, որ մեզ ցոյց է տալիս, որ մենք համագործակցու- թեան ցանցից դուրս ենք մնում», - ըսաւ Անոյշ Սեդրակեան: Ըստ անոր՝ ամերիկեան կառավարութեան՝ Հա- յաստանի մէջ այս ծրագիրը ընդհա- տելու որոշումը կայացած է ոչ թէ մէկ օրուան կամ մէկ ղէպքի վերլու- ծութեամբ, այլ՝ երկրին մէջ տեւա- կան ժամանակ ուսումնասիրութիւն- ներ իրականացնելէ ետք:

Ըստ Կովկասի ուսումնարանի տնօրէն Ալեքսանդր Իսկանդարեա- նի՝ մարտմէկեան ղէպքերը եւ անոնց չբացայայտուելը, ի հարկէ, մէկ քայլ ետ էր, եւ «ատիկա առանց դեպքան Մարի Եովանովիչի ալ հասկնալի էր»: Սակայն, ըստ անոր, քաղաքական վերլուծութիւնները- ցոյց կու տան, որ կարելի չէ ըսել, թէ այս դրամաշնորհը հաշուի

կ'առնուի բացառապէս երկրի ժո- դովրդավարական կարողականու- թիւնը: «Տրուել է Կանային, իսկ այն, չեմ կարծում, որ աւելի ժո- դովրդավարական երկիր է», - ըսաւ Իսկանդարեանը:

Չբացառելով, որ ծրագիրը ներդրում չէ, այլ դրամաշնորհ, որ ԱՄՆ-ն կու տայ՝ որուն կը փափաքի տալ, Անոյշ Սեդրակեան ըսաւ, որ արտաքին փողեր ներգրաւելու հա- մար անհրաժեշտ է լուծել ներքին խնդիրները: «Մեր երկիրն ապ- ըում է, այնուամենայնիւ, ոչ թէ սեփական միջոցներով, այլ՝ արտա- քին փողերով», - ըսաւ ան եւ աւել- ցուց, ըսելով, որ «Հազարամեակի մարտահրաւէրները» փող տրա- մադրելու միջոց է, որ կ'ըսէ, թէ ինչի համար կ'օգնէ քեզի:

Իսկանդարեանի կարծիքով՝ մէկ գլխուն դազանակով խփելը կ'անդրադառնայ ո'չ միայն այդ գլխուն, այլեւ բազմաթիւ այլ գլուխ- ներու վրայ, քանի որ երկրին տրուող գումարը կախուած է տու- եալ ղէպքի մասին համաշխարհա- յին կարծիքի ձեւաւորումէն:

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆ ՈՒ ԼԵՒՈՆ ՏԵՐ- ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԶԱՆԴԻՊԵԼ ՈՒ ԶՐՈՒՑԵԼ ԵՆ

«Ժառանգութիւն» կու- սակցութեան հիմնադիր Րաֆ- ֆի Յովհաննիսեանն ու Հայ ազգային կոնգրէսի առաջ- նորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը Ապրիլի 17-ին հանդիպել են Կոմիտասի անուան պանթէո- նում: Տէր-Պետրոսեանն ու Յովհաննիսեանը Պանթէոն էին ժամանել ՀժԿ հիմնադիր Կա- ըն Դեմիրճեանի ծննդեան 79-ամեակի առթիւ՝ յարգանք- քի տուրք մատուցելու նրա շիրիմին:



Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Րաֆֆի Յովհաննիսեան կը գրուցեն Կոմիտասի անուան պանթէոնէն ներս

Երբ ՀԱԿ առաջնորդը շրջելիս է եղել Պանթէոնում, նրան է մօտեցել Րաֆֆի Յովհաննիսեանը: Երկու գոր- ծիչները մօտ 15 րոպէ առանձ- նազրոյց են ունեցել՝ գրաւելով բոլոր ներկաների ուշադրու- թիւնը:

Թէ ինչի մասին են զրուցել նրանք՝ յայտնի չէ: «Ես տեղեակ չեմ այդ զրոյցից: Եթէ հրատապ անհրաժեշտութիւն լինէր, ապա կը գումարուէր վարչութեան նիստ եւ մենք կը ծանօթանայիք զրոյցի բովանդակութեանը: Իսկ եթէ դա չի արուել, նշանակում է, որ կու- սակցութեան կողմից որոշում ըն- դունելու կարիք չկայ այդ հան- դիպման հետքերով», - NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը: Նա նաեւ նշեց, որ եթէ Յովհաննիս- եանի եւ Տէր-Պետրոսեանի միջեւ ծաւալուած լինէր հրատապ լու-

ծումներ պահանջող զրոյց, ապա Րաֆֆի Յովհաննիսեանը կը նա- խաձեռնէր կուսակցութեան վար- չութեան նիստ:

Նշենք, որ Րաֆֆի Յովհան- նիսեանի եւ Լեւոն Տէր-Պետրոսեա- նի միջեւ հեռակայ բանավէճ էր ծաւալուել ՀԱԿ Մարտի 17-ի հան- րահաւաքից յետոյ: ՀԱԿ առաջնոր- դը հանրահաւաքի մասնակիցների հետ մտնելով Ազատութեան հրա- պարակ, չողջունեց այդտեղ հացա- դուլ անցկացնող Րաֆֆի Յովհան- նիսեանին:

Այդ քայլից յետոյ սուր բանա- վէճ ծաւալուեց ՀԱԿ համակիրների եւ «Ժառանգութեան» ներկայա- ցուցիչների միջեւ, ովքեր միմ- եանց հասցէին սկսեցին տարբեր մեղադրանքներ հնչեցնել:

ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒԲԻՆԵԱՆԸ ԶԱԿ-ԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԿ, «ԲԱՅՑ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ՊԱՅՔԱՐԸ»

Կարապետ Ռուբինեանը յայ- տարարութիւն է տարածել՝ յայտ- նելով Հայ ազգային կոնգրէսին իր անդամութիւնը դադարեցնելու մա- սին: Ստորեւ ներկայացուած է Ռու- բինեանի յայտարարութիւնը, որը տարածուել է Facebook սոցիալա- կան կայքում:



Կարապետ Ռուբինեան

դուրժելը յանցագործութիւն է մեր երկրի ու սերունդների նկատ- մամբ: Իւրաքանչիւր քաղաքական ուժ կամ անհատ, որը չի հաշ- տուում է այս ռեժիմի հետ ու պայ- քարում է, իմ դաշնակիցն ու պայ- քարի ընկերն է:

Ազատութիւն քաղաքատարկ- եալներին: Կորչի երկիրը կործա- նող քրէաօլիգարխիկ ռեժիմը»:

Կարապետ Ռուբինեանը 1988- ից եղել է Ղարաբաղեան շարժման, ապա Հայոց համազգային շարժ- ման ակտիւ մասնակից, 1991-1999 թթ.անընդմէջ ընտրուել է ՀՀԾ վարչութեան անդամ: 1995-1998 թթ. եղել Ազգային ժողովի փոխ- նախագահ: 2007թ. ակտիւօրէն մաս- նակցել է Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահական մրցարշաւին, եղել է Շէնգալիթի նախընտրական շտա- բի ղեկավարի տեղակալ: 2008թ. Մայիսին մի խումբ համախոհնե- րով հիմնել է ՀՀ քաղաքական բանտարկեալներ եւ հրաձեռնու- րի պաշտպանութեան կոմիտէ: Բո- լորովին վերջերս հիմնել է այսպէս կոչուած՝ «ՅԱ - առցանց ազատա- կանների ալեանս»:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՅԱՆԳՍԱՅԱԾ ԶԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՈՒՂԵՂՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՍՔՈՎ»

Հնարաւոր չէ բարձր պահել գիտնականի հեղինակութիւնը, եթէ նա չնչին աշխատավարձ է ստա- նում: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել 38 տարուայ վաստակաւոր գիտնական Ռոբերդ Մարգարեանը:

«Գիտութիւնը սիրում է, որ իրեն սիրեն-փայտայեն, բայց պի- տի ապահովուած լինես: Եթէ երե- խադ սոված է, էլ ի՞նչ գիտութիւն, պէտք է շինարարութիւնում էլ աշխատես: Այսօր պարզապէս ու- շադրութիւնից դուրս է մնացել գիտական ոլորտը, արդիւնքում անուանի գիտնականների մեծ մա- սը արտերկրից լաւ առաջարկներ է ստացել ու հեռացել: Իսկ նրանք, ովքեր մնացել են, արդէն թոշակի են անցել ու աշխատում են գոտ ոլորտի գոյութիւնը պահպանելու համար», - ասել է Ռոբերդ Մարգա- եանը՝ շարունակելով, որ գիտու- թեան ոլորտում աշխատող մնացել են միայն թոշակառուները, քանի որ «երիտասարդներն այլեւս չեն ընտրում այս ոլորտը, քանի որ

նրանց չի գայթակղում 30-40 հա- զար դրամ աշխատավարձը»:

«Որքան էլ զարմանալի է մեր երկրի կառավարութիւնն ամենե- լին էլ անհանգստացած չէ Հայաս- տանից ուղեղների արտահոսքով: Հարեւան երկրներում գնահատում են հայ գիտնականի աշխատանքը՝ տալիս բարձր աշխատավարձ, ստեղ- ծում նորմալ պայմաններ գիտա- կան գործունէութեան համար», - իր կարծիքն է արտայայտել երիտա- սարդ գիտնական Գոռ Մանասեա- նը: Երիտասարդ գիտնականը հա- մոզուած է, որ նոյնը կարող են անել նաեւ մեր երկրում, բայց այնպիսի տպաւորութիւն է, որ պարզապէս չեն ուզում գիտական ոլորտի վրայ գումարներ ծախսել:

«Իմ գիտնական ընկերներից շատերն հիմա այս ոլորտում չեն, ես ընտրել եմ չարեաց փոքրագոյնը՝ երկու տեղ եմ աշխատում, նաեւ մանկավարժութիւն եմ անում, որպէսզի գիտական ոլորտից դուրս չգամ», - ասել է Գոռ Մա- նասեանը:

ԳՆԻ ԻԶԵՑՈՒՄ

Շարունակուած էջ 2-էն

սարսափ ունենան՝ այն կորցնելու հանդէպ: Եւ վերջապէս, իշխանու- թիւնը կորցնելուց յետոյ նրանք չպիտի ամէն զիշեր երազ տեսնեն այն մասին, թէ ինչպէս են նո- րիցիշխելու: Մարդիկ, ձգտելով որեւ- լէ պաշտօնի կամ մանդատի, պէտք է հաշուի առնեն, որ իրենց եւ իրենց մերձակորդների կեանքը շեշտակիօ- րէն չի տարբերուելու մնացած քա- ղաքացիների կեանքից, եւ պաշտօ- նը կորցնելը, միակողմից, չի բե- րիորդէ ողբերգական հետեւանքի:

Իհարկէ, այստեղ առաջնայի- նը կողմակցի առջի ղէպ պայքարն է: Բայց՝ ոչ միայն: Կարեւոր է նաեւ որոշակի պետական ականդոյթնե- րի ստեղծումը: Օրինակ, 98 թուա- կանին Լեւոն Տէր-Պետրոսեանն իր թիմով կամաւոր, առանց իրա- վիճակը սրելու, հեռացաւ իշխա-

նութիւնից: Դա գնահատուեց յա- ջորդ կառավարիչների կողմից: Ամենեւին, հրաժարականի յաջորդ իսկօրը նրանք, իրենց քարոզիչնե- րի շուրթերով, սկսեցին խոսել «նա- խորդ յանցաւոր ռեժիմի մասին» եւ քրէական հետապնդումներ կազ- մակերպել: Դրանից յետոյ որեւէ իշ- խանութեան մտքով կ'անցնի՝ կա- մաւոր լքել աթոռները: Կամ? 20 տարի շարունակ ընդդիմութիւնը (որոշակի հիմքեր ունենալով, իհար- կէ) պնդում է, որ իշխանաւորները գող, աւազակ եւ թալանչի են, ու ակնարկում է, թէ իշխանափոխու- թիւնից յետոյ կը գալ ժողովրդի «վրիժառուութեան» ժամը: Դրանից յետոյ արդէօք գարմանալի՞ է, որ ընտրութիւնների ժամանակ «ահեղ դատաստանից» վախեցած իշխանութիւններն իրենց իսկա- պէս աւազակաբարոյ են պահում: «ԱՌԱՒՕՏ»



**ԼՈՒՐԵՐ**

**Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ.  
«ՄԵՂՔԸ ՄԻԱՅՆ ՄԵՐԸ ԿՐ ԼԻՆԻ»**

«Ուզում էք, ես հենց այսօր ես կը ճանաչեմ Հայաստանի անկախութիւնը», - հեռախօսազրոյցի ընթացքում Լեւոն Տէր-Պետրոսեանին ասել է ՌԴ նախկին նախագահ Բորիս Ելցինը: Պատասխանը եղել է. «Իհարկէ, ուզում եմ»: Սլաւոնական ակումբին միանալու համար Լեւոն Տէր-Պետրոսեանը Բորիս Ելցինին մէկ պայման է առաջադրել, որպէսզի նորաստեղծ միութեան բոլոր երկրները փոխադարձ ճանաչեն միմեանց անկախութիւնը: Ելցինն ասել է, որ դա խնդիր չէ եւ ապացուցել է:

«Ես կարծեցի, որ դա կատակ է: Նստած էինք տանը, հեռուստացոյցը միացրեցինք, «Վրեմիայի» թողարկումն էր: Առաջին լուրն էր՝ այսօր Բորիս Նիկոլաեւիչի որոշմամբ ՌԴ-ն ճանաչել է Հայաստանի եւ Ղազախստանի անկախութիւնը», - Ապրիլ 18-ին «Բի-բի-սի»-ին տուած հարցազրոյցում Հայաստանի անկախութեան ճանաչման պատմութիւնը ներկայացրել է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Առաջին նախագահը ներկայացրել է նաեւ անկախութիւնից յետոյ մինչ օրս Հայաստանի ձեռքբերումներնուկորուստները: Անկախ Հայաստանի տնտեսական եւ սոցիալական ոլորտներում Տէր-Պետրոսեանը միանշանակ անկում է արձանագրում. «Դա փաստ է: ԽՍՀՄ նախկին պետութիւնների որեւէ մէկը, բացի մերձբալթեան երկրներից դեռ չի հասել կեանքի այն մակարդակին, որը կար 1988թ»:

Լեւոն Տէր-Պետրոսեանը անկախութեան 20 տարիների ընթացքում ձեռքբերում է համարում ժողովրդավարութեան, խօսքի, խղճի ազատութեան ձգտելը. «Այդ հարցին տարբեր տեսանկիւնից է պէտք նայել: Գլխաւորը մեծ առաջընթացն է Խորհրդային նախկին երկրների եւ ամբողջ աշխարհի համար: Զկայ կայսրութիւնը, չկայ կոմունիզմը, չկայ սառը պատերազմ: Իհարկէ, այստեղ այլ հարց է ծագում: Այսօր աւելի անվտանգ

չէ, քան սառը պատերազմի ընթացքում»:

Լեւոն Տէր-Պետրոսեանը «Բի-բի-սի»-ին նաեւ յայտնել է, թէ 1988թ. չէին պատկերացնում, թէ ինչի կարող է հանգել Ղարաբաղեան շարժումը, որեւէ մէկի մտքովչէր անցնում, որ Խորհրդային միութիւնը կարող է փլուզուել»: Տէր-Պետրոսեանը նշել է, որ Խորհրդային Սահմանադրութեան շրջանակներում մենք հնարաւորութիւն ունէինք ԼՂ-ն դուրս բերել Ադրբեյջանի կազմից եւ միաւորել Հայաստանին:

Խօսելով ԼՂ հիմնախնդրի կարգաւորման գործընթացի մասին՝ Տէր-Պետրոսեանը նշել է ինդրի կարգաւորմանը մենք ամենամօտը եղել ենք 1997թ. «Խնդիրը հնարաւոր էր լուծել 1997թ. ինչ-որ տարածքներ տալ Ադրբեյջանին, հաշտութիւն կնքել, ստեղծել ԼՂՀ-ի միջանկեալ կարգավիճակ, յետոյ որոշել ԼՂՀ-ի վերջնական կարգավիճակը»:

Տէր-Պետրոսեանի խօսքերով ինդրին 1997թ. չլուծուեց, քանի որ Ղարաբաղը կարծում էր, որ աւելին կարող է ստանալ, մտեցումը մաքսիմալիստական էր. «Ոչ միայն Ղարաբաղը, այլեւ իմ շուրջն էլ, իմ թիմում էլ կային մարդիկ, ովքեր այդպէս էին կարծում: Ես ասացի՝ լաւ, եթէ դուք կարծում էք, որ աւելի լաւ լուծում կայ՝ ինդրեմ, ես չեմ կարող տապալել այդ լուծումը»:

Իսկ վերջում ՀՀ առաջին նախագահը խօսել է Հայաստանի ապագայի մասին եւ ասել, որ ինքը լաւատես է: «Ես համոզուած եմ, որ լաւ է լինելու»:

Մենք մէկ խնդիր ունենք՝ իշխանութիւնը խեղաթիւրուած է: Կը վերականգնենք այն եւ ամէն ինչ լաւ կը լինի, նորմալ երկիր կը լինի, Ադրբեյջանի հետ էլ ինդրը կը լուծուի, Թուրքիայի հետ էլ: Իսկ եթէ Հայաստանը կանգնի աղէտի առաջ, մեղքը միայն մերը կը լինի: Միայն մերը»:

**ԴԱՆԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Ե ԴԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԻ ՔԱՆԴՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՈՒ**



Թուրք նկարիչ Պետրի Պայֆամ

Ապրիլ 18-ին Սթամպուլի մէջ յարձակման ենթարկուած է յայտնի նկարիչ Պետրի Պայֆամը: Այս մասին կը տեղեկացնեն թրքական լրատուամիջոցները:

Թրքական գանգուածային լրատուամիջոցներու փոխանցմամբ՝ Պայֆամի վրայ յարձակումը իրականացած է Կարսի մէջ հայ եւ թուրք ժողովուրդներու միջեւ բարեկամութիւն խորհրդանշող «Մարդկութեան եւ խաղաղութեան» յուշարձանին նուիրուած ժողովէն ետք:

Ականատեսներու վկայութեամբ՝ Պեշիքթաշի մէջ գտնուող «Աքաթլար» մշակութային կեդրոնի մուտքին առջեւ՝ 30-35 տարեկան անյայտ անձը դանակով հարուածած է Պայֆամը եւ դիմած է փախուստի: Արուեստագէտը տեղափոխուած է հիւանդանոց:

Դէպքին առնչութեամբ հետաքննութիւն կ'իրականացուի: Թրքական լրատուամիջոցներու տեղեկացմամբ՝ Պետրի Պայֆամը իր ընկերներուն հետ կը պատրաստուէր 23 Ապրիլին երթ կազմակերպել դէպի Կարս՝ ի պաշտպանութիւն «Մարդկութեան եւ խաղաղութեան» յուշարձանի:

Ինչպէս արդէն տեղեկացուցած էինք, այսօր սկսած է Կարսի հայ եւ թուրք ժողովուրդներու բարեկամութիւնը խորհրդանշող «Մարդկութեան եւ խաղաղութեան» յուշարձանի ապամոնթաժման աշխատանքները: Սուքափը թաղամասի բնակիչները, ուր տեղադրուած է արձանը, բողոքի ցոյց կազմակերպած էին՝ պահանջելով չքանդել արձանը: Բողոքի ցոյցին միացած երեխաները քարկոծած էին յուշարձանի քանդումը իրականացնող ընկերութեան աշխատակիցները: Դէպքի վայր ժամանած են ոստիկանութեան աշխատակիցները, որոնք յուշարձանի տարածքէն հեռացուցած են ցուցարարները:

**ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ԵՂԵՈՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ**

Շարունակուած էջ 1-էն

եանը՝ կատարելու համար Խորհրդարանի նիստի բացման աղօթքը: «Այսօր մենք յատկապէս կ'աղօթենք աշխարհի խաղաղութեան եւ բոլոր անոնց համար, որոնք կը տառապին որպէս զոհեր անարդարութեան, պատերազմի եւ աղքատութեան: Ամենակարող Աստուած, քաջ տեղեկ ենք, որ Խորհրդարանի պատուարժան անդամները ընդառաջած են քու կոչիդ՝ իրենց իմաստութեան բաժինը բերելու Գալիֆորնիա Նահանգի բարեխառն համար: Անցնող 96 տարիներու ընթացքին մեր աղօթքներուն մէջ երկիւղածութեամբ չիշած ենք ցեղասպանութեան զոհերը: Մեր աղօթքները պիտի շարունակուին յարգելու համար անոնց յիշատակը: Այսպիսով ո'չ թէ միայն մեր յարգանքը կը ցուցաբերենք անոնց նահատակութեան, այլ մեր յստակ պատգամը կ'առաքենք բոլոր ազգերուն, թէ Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած կեանքի պարգեւը կարելի չէ հեռացնել բռնի ոյժով եւ վայրագութեամբ», ըսաւ սրբազան հայրը իր աղօթքին մէջ:

Խորհրդարանի նիստը շարունակուելով, միաձայնութեամբ վա-

ւերացուեցաւ թիւ 7 բանաձեւը, որ Ապրիլի 18-24, 2011 կը հռչակուի Գալիֆորնիա Նահանգին կողմէ Հայկական Յեղասպանութեան շաբաթ: Բանաձեւը նաեւ կոչ կ'ընէ Ամերիկայի Գոնկոլեսին եւ նախագահին՝ յիշատակելու այդ շաբաթը:

«Իսկապէս որ ողջունելի է Գալիֆորնիա Նահանգի Օրէնսդիրին կողմէ Հայկական Յեղասպանութեան կարեւորութեան անդրադառնալը: Այս քայլը մեծ արժէք կը ներկայացնէ Ամերիկահայութեան, ինչպէս նաեւ աշխարհացորիւ հայութեան համար», այս առթիւ յայտարարեց ՀԱՆ-ի վարչութեան անդամ Սեւակ Խաչատուրեան ու աւելցուց, «Յոյսով եմ որ, Դաշնակցային կառավարութիւնը, ինչպէս նաեւ Թրքական կառավարութիւնը պատմական իրողութիւնը ընդունելով վերջապէս կը ճանչնան Հայոց Յեղասպանութիւնը»:

ՀԱՆ-ի պատուիրակութիւն, հայկական այլ կազմակերպութիւններու ղեկավարներուն հետ միասին, հանդիպումներու շարք մը ունեցան Խորհրդարանի անդամներուն հետ ու անոնց ներկայացուցին Հայ համայնքը մտահոգող հարցեր:

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՕԴԱՆԱԲԱԿԱՅԱՆԻ ՇԱՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՅԵՏԱԶԳՈՒԵԼ Է**

Ստեփանակերտի օդանաւակայանը, ինչպէս նախօրօք յայտարարուել էր, Մայիսի 9-ին չի շահագործուի:



Լեւոնային Ղարաբաղի նախագահի մամուլի խօսնակ Դաւիթ Բաբայեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փոխանցեց, որ օդանաւակայանի շահագործման կոնկրետ ժամկէտներ չեն նշուած: Խնդիրը, ըստ Բաբայեանի, քաղաքական չէ, այլ՝ կազմակերպչական:

Նրա խօսքով՝ այս պահին աշխատանքներ են կատարուում օդանաւակայանի թռիչքուղին միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղութեամբ:

Ստեփանակերտի օդանաւակայանի բացման լուրը բուռն արձագանք էր գտել Ադրբեյջանում: Ադրբեյջանի քաղաքական աւելի քան պետական վարչութեան ղեկավար Արիֆ Մամեդովը յայտարարել էր, թէ պաշտօնական Բաքուն իրաւասու է ոչնչացնել Ստեփանակերտի օդանաւակայանում վայրէջք կատարող ինքնաթիւները: Դրան ի պատասխան՝ Հայաստանի նախա-

գահ Սերժ Սարգսեանը յայտարարել էր, թէ պատրաստ է լինել Երեւան-Ստեփանակերտ առաջին չուերթի առաջին ուղեւորը:

Ամփոփելով տարածաշրջանի կատարած իրենց եւօրեայ այցելութիւնը՝ օդանաւակայանի շահագործման խնդրին են անդրադարձել նաեւ Լեւոնային Ղարաբաղի բանակցային գործընթացում միջնորդական առաքելութիւն ստանձնած ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները: Համանախագահներին մտահոգում է այն, որ Լեւոնային Ղարաբաղում օդանաւակայանի ծրագրած բացումը կարող է հանգեցնել իրավիճակի հետագայ սրմանը:

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ  
ՍՈՒՐԲ ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՍԸ  
«ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԱ ՆՈՐՈԳԵՍՑՈՒՔ»**

Մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուսի Քրիստոսի սուրբ եւ յաղթական Յարութեամբ նորոգենք մեր կեանքը: Այս է Յարութեան Տօնին խորհուրդը: Նորոգուիլ Քրիստոսի Սուրբ Յարութեամբ: Թօթափել մեր վրայէն հին մարդը եւ զգենուլ նորը, որ պիտի ապրի ու ստեղծագործէ Քրիստոսի նմանակցութեամբ: Ճշմարտապէս քրիստոնեան իր մէջ ունի աստուածային այն գորութիւնը, որ կը կարողանայ իր կեանքէն մերժել փորձութիւններն ու արտաքին բոլոր տեսակի վտանգները, որովհետեւ ստեղծուած է Աստուծոյ պատկերին համաձայն: Այս հաւատքով ապրեցան մեր հայրերը եւ նոյն հաւատքի կեանքով ապրելու հրաւերն է այս Զատիկը:

«Քրիստոս Յարեալ ի մեռելաց»:

Զատիկական Տօնը նոր կեանք շեփորող առաւօտն է մարդկութեան կեանքին մէջ: Հաւատքի կեանքով դէպի Աստուած բարձրացող քրիստոնեային համար Քրիստոսի Յարութիւնը կեանքին ուղեգծող մեծագոյն եւ անկրկնելի հրաշքն է, որովհետեւ Անոր հրաշալի Յարութիւնը մեր առջեւ կը բանայ նոր կեանքի դուռը, բայց անոր հետ միասին քրիստոնեան իր մէջ կը գտնէ այն բոլոր յատկանշական ստորոգելիները, որոնք եւ միջոց կը դառնան մեր կեանքը մշտապէս հրաշագործելու: Իսկ հայ քրիստոնեային համար Զատիկը - Քրիստոսի Յարութեան Տօնը կեանքի տօնն է: Մանաւանդ այս Զատիկը կրկնապատիկ կը դառնայ մեզի համար, որովհետեւ կը համընկնի 24 Ապրիլին, այն նուիրական օրը, երբ մենք կը տօնախմբենք նաեւ մեր ազգի Յարութիւնը, որուն տեսիլքը իրենց հոգիին մէջ նահատակ դարձան մեր նախնիք:

«Սուրբ Յարութեամբ նորոգեսցուի»:

Միքիլի բարեպաշտ հայրդիք, ի՞նչ կը պատգամէ այս մաղթանքը: Արթնութեան կոչն է այդ, որպէսզի կեանքը ապրինք Աստուծոյ օրէնքին համաձայն: Արթնութեան հրաւերն է, որ Քրիստոսի Յարութեամբ նորոգուած մեր մէջ տեսնենք մեր ազգի յարութիւնը եւ մեր իսկ ձեռքերով, մեր նոր հաւատքով, մեր անձերու պատարագով հայրենիք սիրենք, Ս. Էջմիածնի խորան մը ալ մեր սրտերուն մէջ հաստատենք, ընտանիքը սիրենք ու գուրգուրանք անոր սրբութիւնը, լեզուն ու աւանդութիւնները պահենք, պատուաւոր քաղաքացիները դառնանք այս երկրին, յարութեան շունչը պատգամենք մեր զաւակներուն եւ

երիտասարդներուն, անոնց կեանքը կապելով մեր Մայր Ս. Եկեղեցիին, ու միշտ քաջալեր հանդիսանալով որ նորահաս սերունդը ջերմեռանդն ուսումնասիրութեամբ ձգտի կատարելին:

«Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի»:

Միքիլի բարեպաշտ հաւատացեալներ, Քրիստոսի Յարութիւնը մարդկութեան կեանքի վրայ տարածուած օրհնութիւնն է: Քրիստոս իր Յարութեամբ պարտութեան մատնեց խաւարը եւ մեր առջեւ բացաւ նոր կեանքի դուռը: Նոր կեանքը՝ Քրիստոսի Յարութեան լոյսով լեցուած բարոյական ու հոգեւոր արժէքներով հարուստ կեանքն է: Քրիստոսի հրաշալի Յարութիւնը մեր մէջ կը նորոգէ իւրաքանչիւրի կեանքը, որպէսզի այն ապրինք ստեղծագործ ոգով, դառնանք Աստուծոյ ձեռքերը եւ դառնանք խաղաղութեան ձայնը աշխարհի կեանքին մէջ, Աստուծոյ սիրոյն պատգամաբերը եւ պահպանը այս զեղեցիկ աշխարհին:

«Քրիստոս Յարեալ ի մեռելաց»:

Հայ քրիստոնեային համար Սուրբ Յարութեան Տօնը այսօր կը խորհրդանշէ նաեւ մեր ազգի յարութեան տօնը: Մեր ազգի կեանքը Քրիստոսի խաչելութեան ճանապարհէն ընթացած եւ Անոր հետ, սակայն, ապրած իր յարութիւնը: Աշխարհի երեսին ապրող ամէն մէկ հայուն կեանքը կ'արտացոլէ Քրիստոսի Յարութեան լոյսը գործնապէս: Անցնող տասնամեակները ըլլայ հայրենիքէն ներս եւ թէ արտասահման, մեր ժողովուրդը ինքզինքը գերազանցեց նոր արշալոյսներու ճարտարապետներ հասցնելով: Մի քանի տասնամեակներ առաջ՝ Եղեռնէն վերապրած հայրդիք եւ անտուն որբեր դարձան լոյսի ճարտարապետներ, լոյսի փարոսներ, գալիքին տեսիլքով ոգեղինած առաջնորդներ:

Քրիստոսի Յարութեան շունչով խանդավառ, ջերմ աղօթք կը բարձրացնենք աշխարհի խաղաղութեան համար, Միացեալ Նահանգաց բարգաւաճման, մեր Մայր երկրի Հայաստանի հզօրացման, Ս. Էջմիածնի պայծառացման եւ ձեր բոլորի համար, որպէսզի Յարութեան Տօնը դարձնենք մեր կեանքի անկրկնադարձը՝ գլխաւոր տեսնելու ճանապարհին: Ամէն:

**ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
ՏԵՐՏԷՐԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ**

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԻ  
ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱ ՊԱՏԳԱՍԸ  
ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒԴՆԻ ՏՕՆԸ**

Քրիստոսի Յարութիւնը յաղթանակի եւ վերածնունդի տօնն է: Մինչ Ծնունդը կ'աւետէ Փրկչին մարդեղութիւնը, Զատիկը Փրկագործութեան լրումը կը հռչակէ:

Ծնունդը սկզբնաւորութիւնն է մեր Փրկութեան: Այդ օրերուն, բացի հովիւներէն եւ մոգերէն ոչ ոք իմացաւ մարդկութեան մեծագոյն դէպքին իրագործումը: Երեսուն տարի ետք միայն մարդեղացած Աստուածը սկսաւ յայտնել ինքզինքը, հռչակելով իր նոր վարդապետութիւնը, աշակերտներ հաւաքելով, հրաշքներ գործելով, ապա հայածանքի ու մահուան ենթարկուելով, մինչեւ որ խաչին վրայէն աղաղակէր թէ «ամէն ինչ աւարտած է», այսինքն իրագործուած է նպատակը որ ու համար եկած էր աշխարհ:

Խաչը Քրիստոսի սիրոյն գազաթնակէտն է, զոհաբերումի գերագոյն չափանիշը: «Զկայ աւելի մեծ սէր քան իր կեանքը տալ իր սիրելիներուն համար», ըսած էր ան:

Բայց այս ամէնը ոչ մի արժէք ու հետեւանք պիտի ունենային եթէ չզար վերջին հանգրուանը Քրիստոսի երկրաւոր կեանքին՝ յարութիւնը: Անոր վրայ հիմնուած էր իր վարդապետութիւնը, եւ անկից կ'առնէր իր ուժն ու հաւատալիութիւնը:

Պօղոս առաքեալ շատ յստակ ու ուժգին կերպով կը բացայայտէ

այս իրողութիւնը. ի՞նչ բանի պիտի ծառայէր մեր հաւատքը, ինչի՞ վրայ պիտի հիմնուէր մեր յոյսը, եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար:

Արդարեւ, եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար, իր գործերը, խօսքերը, ամբողջ կեանքը ոչինչի պիտի վերածուէին, որովհետեւ ինքն իսկ դրած էր իբր պայման ու երաշխիք իր խօսքին ճշմարտութեան՝ իր յարութիւնը: Քանիցս յայտարարած էր թէ ինք պիտի չարչարուի ու մեռնի, բայց վերստին կեանք պիտի առնէ, եւ այդ՝ ի՞ր իսկ կամքովն ու գործութեամբը:

Ասոր համար Պօղոս կը համարձակի ըսել թէ ամուլ է մեր հաւատքը, իմաստէ զուրկ է մեր քարոզածը, եւ թէ մենք զմեզ խաբած կ'ըլլանք եւ ուրիշները՝ եթէ Քրիստոս յարութիւն չէ առած: Ձեռով մը կ'ուզէ ըսել իր հետեւորդներուն. «Եթէ չէք ընդունիր թէ Յիսուս յարութիւն առած է, աւելի լաւ է հրաժարիք Քրիստոնեայ ըլլալէ»:

Հետեւողական ըլլալու համար մենք մեզի հետ, պէտք է հարց տանք. Կարելի՞ է հաւատալ Աստուծոյ եւ մերժել Քրիստոսի յարութիւնը: Անհետեւ մենք մեզի պիտի հակասէինք՝ կասկածելով թէ

Շաբ.ը էջ 19

**ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ  
ԶԱՏԿՈՒԱՆ ՀՐԱՇԵՐԸ**

Յիսուս Քրիստոսի Յարութիւնը պատմական եզակի դէպք մըն է, որուն վրայ հիմնուեցաւ Քրիստոնէական Եկեղեցին: Եթէ Յիսուս յարութիւն առած չըլլար՝ գուցէ սոսկ կրօնական նահատակ մը պիտի ըլլար, բայց ոչ տիեզերական Փրկիչը մարդկութեան: Հաւանաբար ան պիտի ճանչցուէր իբրեւ հանճարեղ մարգարէ մը, կամ փիլիսոփայ մը, որ իր ուսուցած վարդապետութեան եւ համոզումներուն համար իր կեանքը զոհած էր:

Մարդոց փրկութեան իրակաւնութիւնը հիմնուած է աստուածային փրկագործութեան վրայ: Իսկ փրկագործութիւնն ալ հիմնուած է Քրիստոսի Յարութեան իրողութեան վրայ, քանի որ Քրիստոսի Յարութիւնը կը նշանակէ թէ մեղքը, որ Յիսուս Քրիստոս անարգանքի սիւն եղող խաչին գամեց եւ ապա գերեզման իջեցուց, անկարող եղաւ զինք յաղթահարել, ընդհակառակը, ան «յաղթութեան մէջ ընկղմեցաւ»:

Արդարեւ, Աստուծոյ փրկագործութիւնը անկատար պիտի մնար, եթէ մարդկութեան փրկութեան համար մեռնող Յիսուս Քրիստոս գերեզմանին մէջ մնար: Եթէ Քրիստոս յարութիւն առաջ չըլլար, Արեւմտիացի Յովսէփին գերեզմանը, ուր Յիսուսի մարմինը ամփոփուած էր, քրիստոնէական կրօնի գերեզմանը պիտի ըլլար: Յիսուսի Յարութիւնը բացարձակ անհրաժեշտութիւն մըն էր: Քրիստոս պէտք է յաղթանակէր մեղքի եւ մահուան վրայ՝ մարդոց փրկութեան գործը լիովին կատարելու համար:

Քրիստոնեայ Եկեղեցին քսան

դարերէ ի վեր հռչակած է Քրիստոսի Յարութիւնը իբրեւ պատմական անհերքելի դէպք: Քրիստոսի աշակերտները առաջին վկաներն էին անոր յարութեան: Անոնք երեք տարիներ շարունակ աշակերտած էին անոր, լսած էին անոր պատգամները, տեսած էին անոր հրաշագործութիւնները, հուսկ սկանաւտես եղած էին անոր խաչելութեան, մահուան եւ թաղման: Բնականաբար, Յիսուսի խաչելութիւնն ու մահը խորապէս ցնցած էին իրենց ներաշխարհը: Անամոք էր իրենց ցաւը: Վախն ու անոր առթած շփոթութիւնն ընկճած էին անոնց հոգիները:

Երեք օր լքող, սակայն, արտակարգ դէպք մը պատահած ըլլալու էր անոնց յուսահատութիւնը, դառնութիւնն ու վախը փարատելու, անոնց վիշտն ու ցաւը ամոքելու եւ անոնց խախտած հաւատքը վերակենդանացնելու համար: Այդ արտակարգ դէպքը Քրիստոսի Յարութիւնն էր: Այս, Յարութեան դէպքը, Զատիկուայ հրաշքը, Յիսուսի աշակերտներու անձերուն եւ նկարագիրներուն մէջ արմատական փոփոխութիւն մը յառաջացուցած էր: Արդարեւ, իր խաչելութենէն երեք օր ետք, Կիրակի առաւօտուն Արեւմտիացի Յովսէփի դամբանին մէջ, ուր Յիսուս թաղուած էր, հրաշք մը պատահած էր - Քրիստոս յարութիւն առած էր...:

Յիսուսի թափուր գերեզմանը, անոր հրաշափառ Յարութեան դէպքը լիովին յեղաշրջած էր աշակերտներուն կեանքը: Անոնց յոռետեսութիւնը տեղի տուած էր լաւա-

Շաբ.ը էջ 19

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔԱՅԼԵՐԸ  
ԲԱԲԱՐԱՐ ՉԵՆ**

Շաբունակուած էջ 1-էն

րութենէն, որուն համար ալ քայլեր կը ձեռնարկուին:

Հայաստանի պատուիրակութեան անդամ, «Ժառանգութեան» պատգամաւոր Զարուհի Փոստանջեան իր կարգին յայտնեց որ, կը կիսէ ԵՆԽՎ Հայաստանի հարցով համագեկուցողներու խիստ զնահատականները: «Ես ամբողջութեամբ կիսում եմ նաեւ համագեկուցողներին կողմ ուղղուած Հայաստանի իշխանութիւններին՝ ոչ միայն օրէնսդրական բարեփոխումներ, այլ նաեւ պրակտիկ քայլեր անել՝ երկ-

րում ժողովրդավարութեան վիճակի բարելաւման համար: Կիսում եմ նաեւ նրանց զնահատականը, որ համապատասխան վճռական քայլերի բացակայութեան դէպքում, Հայաստանում վիճակն աւելի կը վատանայ», - NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցի ընթացքին ըսած է Փոստանջեան:

Զարուհի Փոստանջեան նաեւ համաձայն է փաստաթուղթի այն դրոյթին, ուր նշուած է որ, 2008-ի Մարտի 1-ի դէպքերու ժամանակ 10 սպանութիւններու չբացայայտուելը կը շարունակեն թունաւորել մթնոլորտը:



# ԻՆՉՈՒ «ՓՈՔՐ ԱԾՈՒ» ՄՆԱՑԻՆՔ

## ՅԱՐՈՒԹՅՆՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Աւելի քան 1500 տարիներ առաջ, Պատմահայր խորենացին կը գրէր. «Թէպէտ մենք փոքր ածու ենք եւ շատ սահմանափակ թիւով, գորութեամբ տկար, եւ շատ անգամ օտար թագաւորութեան տակ նուաճուած, բայց եւ այնպէս մեր աշխարհի մէջն ալ քաջութեան շատ գործեր կան գործուած, գրելու եւ լիշատակելու արժանի»: Եղեռնի 96 ամեակի նախօրեակին, մտաբերելով այս հաստատումը, հարց կու տանք մենք մեզի. ինչո՞ւ հակառակ 15 դարերու թաւալքին, «փոքր ածու» եւ «գորութեամբ տկար» մնացինք: Մետալին միւս կողմը նայելով, անշուշտ հարցադրողներ ալ կրնան ըլլալ, որ հակառակ մեր սակաւթիւ եւ տկար ըլլալուն, ի՞նչպէս դիմացանք մինչեւ հիմա: Մեր այս յօդուածով պիտի փորձենք պատասխանել այս հարցումներուն, նշելով այն ազդակները, որոնք նպաստեցին թէ՛ մեր տկարութեան եւ թէ՛ չարատեւման: Միջանկեալ նշենք, որ այս նիւթին անդրադարձած էինք «Նոր Սերունդ» հեռուստաժամի Օգոստոս 2009ի երեք հաղորդումներու ընթացքին:

Որպէս նախաբան նշենք այն փաստը, որ երբ մեզմէ շատ աւելի ստուարաթիւ եւ գորաւոր ազգեր անհետացած են այս աշխարհի վրայէն, ուրեմն այդ կը նշանակէ որ մենք օժտուած ենք որոշակի յատկութիւններով, որոնք ապահոված են մեր երթը դարերու ընթացքին: Ուրեմն մեզի կը մնայ վեր առնել այդ յատկութիւնները եւ ջանալ ծրագրաւորուած աշխատանքով տարածել եւ ամրապնդել զանոնք մեր ժողովուրդի մտայնութեան մէջ: Միեւնոյն ատեն, մետալին միւս կողմէն դիտելով այս հարցը, կ'արժէ դիտարկել որ երբ մեզմէ ետք եկած ու մեզմէ աւելի սակաւթիւ ազգութիւններ յաջողած են ստուարանալ ու գորանալ, ուրեմն մենք նաեւ ունինք որոշակի յատկութիւններ, որոնք արգելք հանդիսացած են մեր գարգացման: Մեզի կը մնայ նաեւ բացայայտել այդ յատկութիւնները եւ ջանալ սրբագրել զանոնք:

Սկսինք ուրեմն, նշելով մեր լինելութեան հետ առնչուող ազդակները, դրական թէ՛ ժխտական, ներքին թէ՛ արտաքին:

Հայաստան երկրի Աշխարհագրութիւնը երկրի մը աշխարհագրութիւնը մեծ ազդեցութիւն ունի այդ երկրի

բնակչութեան մտածելակերպի զարգացման գործընթացին վրայ: Հայաստանի լեռնային բնութիւնը զարկ տուած է իրարմէ տարանջատուած, տեղական շահեր հետապնդող ինքնավար շրջաններու կազմաւորման: Այս շրջաններուն մէջ զարգացած է տոհմային, հատուածական, նեղ մտածելակերպը, ի հեճուէկ համազգային, աւելի լայն ու տարողունակ մտածելակերպի: Անմիջական միջավայրի, այսինքն՝ մասնիկներու մտահոգութիւններով բոլորովին կլանուած ըլլալով, մեր ուշադրութիւնէն հեռու մնացած է ընդհանուրի, այսինքն՝ ամբողջի, ազգի գոյավիճակի բարորութեամբ մտահոգուելու առաջնահերթութիւնը: Մասնիկները մինչեւ իսկ արգելք հանդիսացած են ամբողջի զարգացման, այլ խօսքով, կեղրոնական հզոր միութեան մը գոյաման: Նոյնիսկ այս յառաջացեալ դարուն մէջ, երբ փոխադրական եւ հաղորդակցական միջոցներու զարգացումը հեշտացուցած է ոչ միայն Հայաստան երկրի զանազան շրջաններու, այլ աշխարհով մէկ ցիրուցան սփիւռքահայ համայնքներու միջեւ շփման կապը, ակնյայտօրէն գերիշխող կը մնայ տոհմային մտածելակերպը: Թէ՛ ի՞նչպիսի ժխտական դրսեւորումներ կը պարզէ այս տոհմային, հատուածական մտածելակերպը, այդ մասին աւելի մանրամասն կ'անդրադառնանք քիչ ետք:

### Հայաստանի Աշխարհագրական Դիրքն ու Շրջապատը

Երկրի աշխարհագրութեան կողքին մեծ է նաեւ այն ազդեցութիւնը, որ երկրի աշխարհագրական դիրքն ու շրջապատը ունին բնակչութեան մտածելակերպի կազմաւորման մէջ: Ո՞ր ցամաքամասի վրայ գտնուելու, ծովային ելք ունենալու կամ չունենալու, մեծ թէ փոքր պետութիւններով, բարեկամ թէ թշնամի երկիրներով շրջապատուած ըլլալու իրականութիւններով կ'ընթացնէ տեղի բնակչութեան մտածելակերպի կազմաւորումը: Հայաստանի աշխարհագրական դիրքը ընդհանրապէս ժխտականօրէն ներկայացուած է մեր պատմութեան մէջ, որպէս կռուախնձոր շրջանի մեծ պետութեանց եւ կամ որպէս խաչմերուկ՝ ասպատակող բանակներու:

Հարիւրամեակներ շարունակ օտարին ենթակայ դարձած ու թշնամիներով շրջապատուած հայութեան վիճակը հասած էր այնպիսի յուսահատական մակարդակի,

որ ըստ մեր սերտողութեանց, մանաւանդ 1890ականերէն մինչեւ Եղեռնի նախօրեակ, այս հարցը հրատապ դարձած էր մեր կարգ մը սրտցաւ մտաւորականներու համար: Հայութեան ապագան վտանգուած համարելով իր բնօրրանին մէջ, անոնք չեն վարանած նոյնիսկ ծայրայեղ ու անսովոր լուծման առաջարկներ ներկայացնել: Ըստ Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյցը» շարքի 1924 հատորին մէջ լոյս տեսած «Հայ Ազգին Փրկութիւնը» յուշագիր-ծրագրին, 1896 Մարտին ուսահայ ծանօթ անձնաւորութիւն մը անստորագիր այս տեղեկագիրը ներկայացուցած է իզմիրլեան պատրիարքին: Վերլուծելէ ետք հայերու դարաւոր դժբախտութեանց պատճառները, ան կ'առաջարկէր «հիմնովին եւ վերջնական գաղթականութիւն մեր պատմական Հայրենիքից» ու նոր Հայաստանի մը հիմնումը... Քանատայի Բրիտանական Քօլոնիալի մէջ (Վանքուվըր): Ուրիշ ազգային մը, Յ. Պապիկեան անունով, 1911 թէ՛ 1912 թուականին Պոլսոյ մէջ հրատարակած է հատոր մը (որ կը գտնուէր Փարիզի Նուպարեան Մատենադարանին մէջ եւ զոր հազիւ ժամ մը առիթը ունեցանք թերթատելու 1979ին), ուր կ'առաջարկէր Արեւմտահայութիւնը գաղթեցնել դէպի Քալիֆօրնիոյ Չրէզֆո քաղաքը:

Պատմական հայրենի երկիրը նորով մը փոխարինելու այս ծայրայեղ ու անսովոր առաջարկները կու գան փաստելու, որ հայութեան բարօր ապագայ մը ապահովելու հեռանկարը ի՞նչպիսի մտածումներու մղած է մեր կարգ մը ազգայինները: Սակայն պատմութիւնը մեզի կը յուշէ, որ զանգուածային գաղթերն ու հողային փոխանակումները ոչ միայն ժխտական անդրադարձ ունեցած են մայր երկրի վրայ, այլ ժամանակաւոր խաբուսիկ յաջողութիւններէ ետք, ի վերջոյ յանգած են ամբողջական կորուստի: Վկայ՝ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի օրինակը, որ 1016 թուականին Սելճուքեան առաջին արշաւանքին ի տես, Տայոց աշխարհի եւ Վասպուրականի իր թագաւորութիւնը (8 քաղաք, 4400 գիւղ, 72 բերդ) փոխանակեց Սեբաստիայով եւ աւելի քան 40000 բնակիչներով փոխադրուեցաւ հոն: Վկայ՝ պատմական Հայկական Բարձրավանդակէն դուրս հիմնուած Կիլիկիոյ Ռուբինեան թագաւորութեան օրինակը: Վկայ՝ Լեհաստանի եւ Հնդկաստանի երբեմնի հարուստ գաղութներու օրինակները: Վկայ՝ հալածաշար դարձող ներկայ Սփիւռքահայ համայնքներու օրինակները:

Անկախ Պետականութիւն Անկախ պետականութիւն կրնան նուաճել եւ պահել միայն այն ազգերը, որոնց մօտ գերակշռող է ընդհանուրի, համազգային շահերու գիտակցութիւնը: Երբ անհատական կամ հատուածական շահերու հետապնդումը կը դառնայ տիրական վարքագիծ, ապա անկումը կը դառնայ անխուսափելի: Մեր պատմութեան անկախ թագաւորութիւններու կամ պետականութեանց անկման պատճառները աւելի վերագրելի են մեր ներքին անհամաձայնութեանց եւ պառակտումներու, քան՝ արտաքին ազդակներու: Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսի նշանաւոր ազդարարութիւնը՝ չփոխարինել հարազատ հիւանդ ոչխարը օտարի առողջ զագանով, պատկերաւոր ձեւով կը յստակացնէ այս իրականութիւնը:

Անկախութիւնը այն բարձրագոյն արժանիքներէն մին է, որուն պէտք է ձգտի ամէն մէկ անհատ, ինքզինք ձեռքբերելով նիւթական թէ բարոյական կախեալ վիճակներէ, մոլութիւններէ եւ յուր բարքերէ: Ինչպէս Մահաթմա Կանտի նշած է, անհատ քաղաքացիներու ներքին անկախութեան ձգտումն ու տիրացումը, նախապայման է երկրի մը արտաքին անկախութեան նուաճման: Երբ ժողովուրդի առաջնորդող եւ կարեւոր հատուածի մօտ ամրապնդուած է այս գիտակցութիւնը, ապա հաստատուն է այդ երկրի անկախութիւնն ու ապագան: Իսկ երբ չկայ, ապա վտանգուած է անոր գոյութիւնը:


### Արտագաղթ

Վերը նշած մեր օրինակներէն յստակօրէն կրնանք հետեւեցնել, որ մայր երկրէն արտագաղթը մեզ տկարացնող, մեր ուժը ջլատող մեծագոյն պատճառներէն մին եղած է: Օտարի կանաչ արօտավայրերը միշտ ալ անզսպելի քաշողական ուժ մը հանդիսացած են հային համար: Ու հայր արտագաղթած է իր երկրէն, շէնցնելու համար օտարի հողը: Օտար պետութիւններն ալ լաւագոյնս շահագործած են հային այս տկարութիւնը, սիրաշահելով զինք ու ժամանակի ընթացքին ձուլելով իր մէջ: Պէտք չունինք հարիւրամեակներ ետ երթալու եւ հին օրինակներ նշելու: Նայինք մեր շուրջը այսօր: Հայաստանի անկախութիւնէն ի վեր, հոնկէ արտագաղթողներու ջախջախիչ տոկոսը հաստատուած են ԱՄՆի եւ Ռուսիոյ մէջ: Ի տես իրենց բնակչութեան աճի տոկոսային դանդաղեցման, Արեւմուտքը եւ Ռուսիան կը հետապնդեն այդ

Շարք էջ 17


**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>- Life Insurance</li> <li>- Health Insurance</li> <li>- Group &amp; Individual</li> <li>- Long Term Care</li> <li>- Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>- Estate Planning</li> <li>- Will &amp; Living Trust</li> <li>- Full Annual Review</li> <li>- Mortgage Protection</li> <li>- College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>- Workman's Compensation</li> <li>- Employee Benefits</li> <li>- Annuity</li> <li>- IRA</li> <li>- 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---



**A.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ՄՏԱԾՈՒՄՆԵՐ՝ ԱՊՐԻԼ 24-Ի ԱՌԹԻ

#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Թուրքիան այսօր լաւ վիճակի մէջ եղած է Օսմանեան Կայսրութեան փլուզումէն ետք (1918): Հաշտարար միջնորդի դեր կը կատարէ տաղանապաճ տարածաշրջաններու ժողովուրդներուն միջեւ, եւ տնտեսապէս ալ՝ աշխարհի լաւագոյն քսան երկիրներու ցանկին մէջն է: Արաբական աշխարհի մեծ եղբայր դարձած է, եւ իսրայէլի ալ չփացած բարեկամն ու գործակիցն է:

Միջազգային հարցեր կարգաւորելու դեր կը ստանձնէ Ամերիկայի եւ Ռուսիոյ կնքահայրութեամբ, եւ իր թեւերը տարածած է Պոսնիայէն մինչեւ Ատրպէյճանն ու Տաճկաստան:

Այսօր յաջող ներկան գործի մղած է իր անցեալի ամօթալի արարքը, Հայկական Յեղասպանութեան ոճիրը, ծածկելու համար:

Հայութիւնն ալ, կարելի է ըսել, կ'ապրի իր ազգային պատմութեան լաւագոյն օրերը:

Հայաստան այսօր միջազգայնօրէն ապահովուած եւ ընդունուած ազատ, ինքնիշխան եւ անվտանգ վիճակ ու կեանք ունեցած է: Արցախի ազատագրումի չափանիւշով պատուաբեր յաղթանակ գուցէ տարած չենք եւ այդ յաղթանակի պաշտպան եւ թիկունք կանգնող ազգային բանակ ունեցած չենք:

Սփիւռքահայութիւնն ալ երբեքիցէ այսօր գորաւոր ներկայութիւն աշխարհի ամէն տեղ ունեցած է:

Սակայն եւ այնպէս, Թուրքիոյ դէմ անհաւասար պայքարի առջեւ կը գտնուինք:

Իրապաշտութիւնը մեզմէ կը պահանջէ գիտակցիլ որ անհաւասար պայքարը պիտի շարունակուի այնքան ատեն որ Թուրքիոյ եւ մեր միջեւ կայ մեծ տարբերութիւն մարդկային թիւի, հողային տարածքի, եւ աշխարհագրական դիրքի տարբերակներուն մէջ:

Ուրեմն, ի՞նչ: Յուսահատիլ եւ յուսալքուիլ: Ո՛չ, երբեք: Գողթաթի գգեսնումը Դաւիթի պարսաւիկի հարուածին օրինակով շատ բան կարելի է ընել: Իրաւատէրի կամքով եւ հաւատքով լեռներ կարելի է շարժել:

Նախ եւ առաջ սակայն, պէտք է միաձուլուիլ եւ հաւաքուիլ համազգային մէկ կազմակերպութեան մը մէջ որ իր մէջ կարենայ ընդգրկել Հայրենիքի եւ Սփիւռքի լաւագոյն ուժերն ու արժէքները: Այսպիսի առաջարկներ ու պահանջներ միշտ եղած են ու տակաւին կ'ըլլան: Մեր նահատակ ժողովուրդի կտակը մեզմէ կը պահանջէ որ աշխարհին անկազմակերպ չներկայանանք Հայկական Յեղասպանութեան Հարիւրամեակին:

Հայաստանն ու Սփիւռքը

խորհրդակցաբար թող ստեղծեն այդպիսի համազգային մարմին մը որ ճշդէ աշխատածեւ, ներկայացնէ պահանջադատի ամբաստանագիր, եւ պատրաստէ փաստաթղթերի ծրար: Մեր ազգային դատի պահանջքի մանրամասնութեան իրագրել թող ըլլայ իրաւատէր հայն ու պատասխանատու թուրքը:

Թող ամէն հայու տրուի ուղեցոյց-աւետարան հայ դատի հետապնդման գործ ընելու եւ տանելու: Թող մեր, ազգային տանաբանեան հայ դատի դասընթաց դառնայ հայ վարժարաններէն ներս: Թող մեր անիրաւութիւն ճաշակած սերունդներու ներաշխարհէն դուրս ժայթքող բարկութեան եւ դժգոհութեան զգացումները վերածուին մեր արդար դատի հետապնդման ուղղութեամբ տարուող աշխատանքի, մինչեւ որ մեզի ի նպաստ արդար դատավճիռ արձակուի:

Չկայ աշխարհի վրայ հայ մը որ մեր արդար դատին գինուորագրուիլ չուզէ: Պէտք է սակայն գինք գինուորագրել ու հայ դատի բանակին ծառայացնել:

Հայաստան եթէ գիտէ աշխարհին տալ Շահմատի սուր միտք ունեցող վարպետ խոյնեաններ, պէտք է գիտնայ նաեւ աշխարհին տալ բարեկամութիւններ շահող ու քաշող գիւտեր եւ հնարքներ:

Այնպէս ընել որ Հայաստան դառնայ մտքի եւ գիւտի կեդրոն եւ հայուն սիրաշահելու համար աշխարհ դառնայ հայու պաշտպան փաստաբանն ու դատավճիռ պարտադրող ուստիկանը:

Այդպիսի յաջող Հայաստանի շուրջ պիտի հաւաքուին սփիւռքահայ անձայրածիր կարողութիւններով եւ կարելիութիւններով գաղթօճախները, եւ Հայ Դատի աշխատանքին գործակից ու մասնակից դարձնեն իրենց ապրած երկիրներու պետութիւններն ու ժողովուրդները:

Ուրեմն, անհաւասար պայքարի իրողութեան գիտակից մեր ժողովուրդը, թուրքի թիւին ու դիրքին առաւելութիւնը պիտի հակադրէ ոչ թէ միջազգային աղերսագիրներ չղելով, այլ իր մտքի ուժին կողմէ շահած ու վաստակած կապերն ու բարեկամութիւնները օգտագործելով:

Հայկական Յեղասպանութեան Հարիւրամեակի շնորհիւ կանգնած վատնելիք ժամանակ չունինք: Մեր ազգովին լաւագոյն ներկան գործի մղենք լաւագոյն կազմակերպուելու եւ մեր դատի աշխատանքը յաջողութեամբ աւարտելու:

Ապրիլ 24-ը ամբաստագիր է մարդկութեան անարդարութեան դէմ, եւ պահանջագիր է հայութեան իր ցեղասպանեալ նահատակներու արեան կանչին անսալու, եղբայրակցելու, միանալու եւ ազգովին յաջողելու:

Ապրիլ 24-ը, այն մշտավառ

### «ՀԱՅՐ ՊԻՏԻ ՄԵՌՆԻ ՈՐՊԵՍՁԻ ՀԱՅ ԱՊՐԻ...»

#### ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Սուրբ Յարութեան Տօնն ու Ապրիլ 24ը այս տարի հետաքրքրականօրէն նոյն օրը կը գուգադիպին, խորհրդանշական եւ «սիմպոլիք» իմաստ տալով օրուան:

Բոլոր աշխարհին Ս. Չատուրուայ տօնը խորհրդանշէ կեանքի, յարութեան ու յաղթանակի: Իսկ Ապրիլ 24ը հայ ժողովուրդի լինելութեան եւ գոյութեան յաղթական ապացոյցը:

96 տարիներ ետք, այսպիսի օրով, աշխարհով մէկ բեկոր-բեկոր ցրուած հայը կրկին անգամ իր իսկ սուրբ ուխտը վերանորոգելու սուրբ պարտաւորութեան տակ, իր ամբողջականութեամբ աղօթք պիտի բարձրացնէ առ Աստուած եւ անկէ ետք ալ իր բողոքի ձայնը պիտի հնչեցնէ համայն աշխարհին, իր յատուկ «լեզուով» որ իր ինքնութեան գրաւականն է եւ յարատեւելու կոտուանը:

«Լաւ է որ հայը տակաւին գիտէ աղօթել, աշխատիլ, պայքարիլ, գործունեայ դառնալ եւ աշխարհին լսելի դառնալ: Լաւ է որ կայ հայ մամուլ, հայ գիրք, հայ կուսակցութիւն, միութիւն, ընտանիք եւ հայ դպրոց:

Մեր լեզուն՝ հաղորդ դառնալու եւ պահանջելու, մեր դատը պաշտպանելու եւ լսելի դառնալու եւ յարատեւելու մեր գէնքն է: Մեր ազգային ու անհատական լինելութեան առողջ եւ հսկայ գրաւակաւնը:

Եթէ մենք չհաւատանք մեր պատմութեան, չխորանանք եւ չապացուցենք, հապառօ՞վ այդ գործը պիտի կատարէ: Եթէ մենք զանգատինք եւ քննադատենք եւ մեր կարողութիւնները ի գուր տեղեր վատնենք, ո՞վ պիտի պայքարի եւ իր ներդրումն ու գործունէութիւնը ծաւալէ ուր որ անկ է, եւ ինչպէս որ կարելի է:

Ահաւասիկ մեր դատը կը մօտենայ 100 տարուայ եւ մեր առջեւ հսկայ արգելքներ կան, ազգային մտահոգութիւններ, քաղաքական լեզի իրականութիւններ եւ նոյնիսկ ինքնապահպանութեան եւ նօսրացումի հարցեր:

96 տարիներ, անահանջ պայքարով, միակամ եւ միահամուռ պահեցինք մեր դատը: Ընդմիջտ աշխարհի հանրութեան ներկայացանք որպէս «Մէկ ազգ եւ մէկ հայրենիք», բայց կարելի է այստեղ կանգ առնել կամ ծուլանալ: Կեղծիքները եւ փորձութիւնները թող չյուսահատեցնեն մեզ: Սատանային խաղերը թող միայն ու միայն մեր հաւատքը զօրացնեն, ինչպէս որ Քրիստոս յաղթեց սատանային եւ մահուան, այնպէս ալ մենք թշնամիին յաղթեցինք եւ ապրեցանք»:

Սիրելի հայեր, Թող այս օրը ըլլայ արթնութեան եւ վերանորոգման օր, անձնական շահերու մոռացման եւ աշխարհութեան օր: Պահենք մեր դիրմագիծը եւ հաւատամքը եւ մեր մէկ ու կէս միլիոն անշիրիմ եւ յարութիւն առած նահատակներու աղերսը, Քրիստոսի յաղթական յարութեան հետ միատեղ երկինք բարձրացնենք...

«Հաւատա՛, հայ ժողովուրդ, հաւատա՛ քո անցեալին, քո պատմութեան, քո հայրերի Աստծուն, նրանց անմահ եւ կենդանի հոգուն, եւ դու չե՛ս մեռնի: Տե՛ս, կոյրերը բժշկուած են հաւատով, անդամալուծները քայլում, մեռելներն իսկ յարութիւն առնում: Հաւատա՛ թէ պիտի ապրի՛ս, եւ ադ հաւատով գործի՛ր, աշխատի՛ր, տքնի՛ր, յուսա՛... եւ դու չե՛ս մեռնի: Լեզուի, կրօնի, գրականութեան, արուեստի, մշակոյցի պահպանութիւնը կենդանութեան աղբիւրն է»:

«Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա՛»:

կրակն է որ մեր հոգիներուն մէջ կուտակուած եւ ամբարուած տկարութիւնները կ'այրէ, եւ մեր յաջո-

ղելու կամքը կը բոցավառէ: Ապրիլ 24-ը, ամէն հայու վերածննդեան տարեդարձն է:

**ՄԱՅՐԵՐՈՒԻ ՏՕՆ**

Հ.Մ.Մ.ի Տիկնանց Յանձնախումբը սիրով կը հրաւիրէ ձեզ մայրերու օրուայ տօնակատարութեան առիթով

որը տեղի պիտի ունենայ Կիրակի Մայիս 8, 2011 ժամը 11էն սկսեալ 162 Palm (Նախկին Atlantis) ճաշարանին մէջ: 162 North Sierra Madre Blvd. Pasadena, CA 91107

Երգիչ ՄԱԳՕ G-ի ճոխ յայտագրով եւ անակնկալներով կ'սպասենք

ձեր հեռաձայնին

Մուտքի նուէր \$35.00 (626) 497-5111 Քնար (626) 429-8366 Ծովիկ

**ՅԱՐՈՒԹԻՒՆ-ԶԱՐԹՕՆԵ**  
Ն. ՏԵՐԵԱՆ

Զատիկ, Յարութիւն, Աստուածային մի չրաջ գերբնական: Մեծ վարդապետը վասն արդարութեան Քայլեց Գողգոթայ, Չարչարուեց, խաչուեց, Թաղուեց, չմեռաւ. Յարութիւն առաւ Ու մնաց անմահ: Իմ ժողովուրդն էլ

Տանջուեց դարբերով, Տեսաւ արիւն, սով, Թալան, կոտորած, Բայց Տիրոջ նման Նորից կեանք առաւ Ու կեցրտեց Զարթոնք... Փա՛նք Գո Յարութեան, Մարդկութեան փրկիչ, Փա՛նք Զարթոնքին, Իմ հայ ժողովուրդ...

# ՔԵՌՈՒՄ ՅԱԿՈՒ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ 1915-ԻՆ

## ՀԱՏՈՒԱԾ «ՅՈՒՇԵՐԻՍ ԴԵՏ» ԱՆՏԻՊ ԳՐՔԻՑ

### ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Սոցիալական տեսի վկայությունը պատմեց ինձ Արմենակ Բահարեանը (կնքահայրս հայրը՝ հորս հորեղբոր տղան) 1960-ական թուականներին իմ հերթական այցելության ժամանակ իրենց տուն: Արմենակ հորեղբայրս հեզ, բարի, մրջիլներին իսկ չցաւացնող, բարձրահասակ ու ժեղ գեղջուկ էր, դէպի իմիջքը սէր չունէր: Ընտանիքին պահում էր ֆիզիքական ուժին ապահինելով: Իր արտի մշակման հետ մէկտեղ նա մշակում էր նաեւ ուրիշների արտերը: Հերկում, հացահատիկ ցանում, քաղում և շալակով հասցնում կալը, որտեղ կալուում էր այն: Հարող պահեստաւորում էր ընտանի կենդանիների համար, որոնք ցուրտ ձմրանը համարեա երեք ամիս սնւում էին դրանով: Ահա նրա պատմածը:

-Տղա՛ս, Գիտես որ ես անգրագէտ եմ: Մեր ժամանակի մարդկանց մեծ մասն է անգրագէտ: Ես թրքական բանակում միակ հայ զինուորն էի Սիրիայի հիւսիսում՝ Հալէպից 40-50 կմ-ի վրայ գտնուող մի վայրում..., որի մօտով էր անցնում (15 րոպէի ճանապարհ) Հալէպ գնացող երկաթուղապիծը: Գրագէտ զինուոր չկար, հրամանատարներն էլ անգրագէտ էին: Ինձ հետ ծառայող թուրք զինուորների հետ բարեկամացայ: Նրանք չար գում էին ինձ ու վստահում: Բանակում փերուշանութիւն (թշուա-ուութիւն) էր: Բզկտուած շորերով, ծակծկուած կոշիկներով, սոված ու ծարաւ, առանց օճառի, թաղուած էինք ոջիլների մէջ և վախենում էինք խոլերայի համաճարակ սկսուելուց: Ձինուորների հետ խօսելով ժամանակ էինք սպանում մինչև քնելը, որպէսզի չաջորդ օրը շարունակենք նոյնը: Իսկ գիշերը մեր «հիւրերն» էին աներես ոջիլները, որոնք չէին թողնում մեզ հանգիստ քնել: Մի օր գրուցելիս թուրք զինուորներից մէկն ինձ ասաց.

-Լսել եմ, որ բանակի հրամանատարի քարտուղարը հայ է, գնա տե՛ս, մի գուցէ հնարաւորութիւն ունենայ քեզ օգնելու: Մենք արդէն անտէր ենք ու ոչ մի տեղից օգնութեան յոյս չունենք: Գոնէ դու կ'ազատուես այս տանջանքներից ու միգուցէ մեզ էլ կ'օգնես:

Ինչպէ՞ս մոռանալ 1.5 միլիոն անմեղ գոհերին եւ գաղթի քարաւանները, որոնց ժառանգները չեն կորցնում իրենց պատմական հայրենիքում վերահաստատուելու յոյսն ու հաւատը:

Մոռանալ 1915 թ. Ապրիլի 24-ի բարդուղիմեռսեան գիշերը, երբ այլատեսացութեան կացնի մի հարուածով գլխատուեց արեւմտահայ մտաւորականութեան սերունցքը՝ Սիւսանթո, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Սեւակ, ժամանակ անց՝ Գրիգոր Զոհրապ... Մոռանալ հայ հոգեւորական, ջարդերի ականատես Գրիգորիս Բալաքեանի «Հայերու գողգոթան» եղերերգութիւնը (1924 թ.), որի խորագիրն իսկ կանխում է թեմայի մասին հարցումը:

Մոռանալ արաբ ժողովրդի սրտացաւ բարեացակամութիւնը, որն ապաստան տվեց եղեռնապուրծ հայ իլեակներին՝ իր մի կտոր հացը կիսելով օտարագրի մերձաւորի հետ:

Մոռանալ նորվեգացի մեծ մարդասէր Ֆրիտիոֆ Նանսենին, որ Ազգերի լիգայի որոշմամբ (1924 թ.) «Նանսենեան անձնագիր», այսինքն՝ աշխարհաքաղաքացու վկայական տուեց տարբեր երկրներում անհայրենիք դեգերող, Մեծ եղեռնից մազապուրծ 320 հազար հայի: Մոռանալ աւստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» (1934 թ.) վէպը՝ թրքական

բանակի դէմ հայ բնակչութեան յուսահատ, բայց հերոսական ինքնապաշտպանութեան մասին...

Մոռանալ Ադոլֆ Հիտլերի լիտի ինքնարդարացում-հրահանգը հրեաների կոտորածի առիթով. գործի անցէք, հիմա ո՛վ է յիշում հայերի ցեղասպանութիւնը (1938 թ.):

Ո՞ր մէկը թուեմ...

Յիշում եմ, փոքր էի ու երբ հագում էի, Անուշ տատս, որ բարութեան եւ կարեկցանքի մարմնացում էր, անմիջապէս վրայ էր բերում.

- Առողջութիւն քեզ, թող թուրքի լամուկը հազայ:

Մի օր հարցրի. այ տատ, ի՞նչ է արել մեզ անձանօթ թուրքի տղան, որ պատեհ-անպատեհ անիծում ես:

Եղեռն չտեսած արեւելահայ տատս լուրջաչափ հայեցեցր ցած խոնարհեց, բայց երբ հերթական անգամ տրապիզոնցի գաղթական Միհրանին հաց էր տալիս, պատմեց գազրելի եղելութիւնը: Միհրանն այնքան նիհար էր, որ անգամ անունն էին սղել եւ Մրան էին կոչում: Նա անցել էր ցեղասպանութեան դժոխքի բոլոր պարունակներով. 1915 թուին նրա աչքի առաջ կացին-եղանով զազանաբար խոշտանգել էին վեց երեխաներին, սուխահարել կնոջը, կրակել նրա վրայ, տուրը թալանել ու հրդեհել... Քուրդ հարեւանը ծանր վիրաւոր Միհրանին թաքցրել էր մարագում, ինամել եւ ապա ամրանը եայլաները հասցնելով՝ փրկել նրա կեանքը:

Հիմա էլ, տասնամեակներ անց, ոսկոր ու կաշի Մրանը երազներումս այցելում է ինձ, մուրացկանի ուսապարկում անբաժան աճիւնասափորը՝ մի բուռ մոխիր իր հրկիզուած օձախից, եւ շուրթերին իր որբացած բարբառը.

- Քիչիկ մը հաց կուտա՞ս...

Դէմքի խորշմները առուակներով հոսում էր արցունքը, եւ նրա հետ լալիս ու հեծեծում էր կորուսեալ վանայ ծովը.

Եթէ հնար լինէր փոխել հարեւանին, իմ ժողովուրդը կը հաւաքէր ունեցուածքը, համաշխարհային քաղաքակրթութեանը տուած իր մշակութային արժէքները եւ կը գնար ուր աչքը կտրէր: Բայց երկիրը բնակարան չէ, որ ուզած պահին փոխես կամ փոխանակես:

Եթէ իմանայիք, թէ ինչ տառապանք է ամէն առաւօտ բաց վէրքի նման տեսնել Արարատը, եւ չիշել, չիշել... Երեւի վաղուց էիք բուլղոզերներով քանդել ու պատգարակներով տեղափոխել բերլիաական լեռը հաւասարեցնելով հողին...

Եթէ...

Սակայն, պատմութիւնը պայմանական եղանակ չի հանդուրժում:

Օրերս թրքական կայքերից մէկում իրաւապաշտպան էրոզ էոլքորայը ուշագրաւ դիտարկում էր արեւ, թէ ինչու՞ Հայոց Յեղասպանութիւնը տակաւին քաղաքական թապու է, չէ՞ որ ժամանակակից թուրքիան, ի դէմս Նոր հանրապետութեան հիմնադիր Քեմալ Աթաթուրքի, պատասխանատուութիւն չի կրում Օսմանեան կայսրութեան գործած երիտթուրքական ոճրի համար: Իսկապէս, ինչու՞...

Նա թուրքական է երբք պատճառ, որոնք անցեալ դարակազբի թուրքիան պորտալարով կապում են մեր օրերի հետ: Առաջինը



# Նորվեկիական Վկայութիւն

## ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆ «ՅԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ» (Թարգմ. Յրաչ Քաջարեան, Պէյրուք, 1958, Տպ. Լա Ֆոթոյ - Բոստ.)

### ԶԱՐՀՈՒՐԱՆՔԸ

1915-ի Յունիսին սկսաւ գար-հուրանքը, որուն նմանը չէ արձանագրուած պատմութեան մէջ: Կիլիկիոյ, Անատոլիոյ, Միջագետքի բոլոր քաղաքներէն եւ գիւղերէն տեղահան եղան հայերը: Մահաբեր ծրագիրը սկսաւ գործադրուել մեթոտաւոր կերպով:

Թուրքերը վճռած էին օգտուել առիթէն բնաջնջելու համար, միանգամընդմիջտ, ամէն ինչ որ հայ էր: Այրերուն մեծ մասը գորակոչի ենթարկուած ըլլալով, ծերեր, կիներ եւ մանուկներ, հիւանդներ, հաշմանդամներ կ'աքորուէին: Շատեր այս դժբախտներէն՝ մեկնելէ քանի մը ժամ առաջ միայն իմացան թէ տեղահան կ'ըլլալին: Ստիպուեցան թողլէլ իրենց բոլոր ինչ-քերը, տունները, հողերը, կենդանիները, հունձքը, կարասիները եւայլն, որոնք բռնագրաւուեցան թուրք իշխանութեանց կողմէ: Դրամը, գոհարեղէնը կամ ուրիշ արժէքաւոր առարկաներ, գորս ոմանք կրցան իրենց հետ առնել, չափշտակուեցան, չընթացաւ քսորին, ոստիկաններու (ժանտարմաներու) կողմէ:

### ԴԵՊԻ ԱՐԱԲԻՈՅ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԸ

Մարդկային այս դժբախտ էակները տեղահան եղան, քուեցան՝ մեծ խումբերով, հալածուեցան, լեռներուն մէջէն՝ դէպի Արաբիոյ տափաստանները: Զանոնք սնուցանելու կամ պատսպարելու համար՝ ոչինչ չէր նախատեսուած: Ճամբուն վրան՝ ոտքի մնալու համար անհրաժեշտ սնունդը կրցողը կը գտնէր... դրամով:

Անոնք՝ որ պիտի չսպանուէին սուրով կամ պիտի չիջնային յոգնասպառ, պիտի մեռնէին սովահար: Ոճրագործներուն ծրագրին մէջ էր այս պայմանը:

### ԿՈՏՈՐԱԾ, ԿՈՏՈՐԱԾ, ԿՈՏՈՐԱԾ...

Մարդկային դժբախտ էակներէ բաղկացած կարաւանը ճամբայ կ'ըլլէր, իսկզարկու աչքերէ հեռու, ամալի վայրերու մէջ, ոստիկաններու անտարբերութիւնը կը փոխակերպուէր անորակելի բռնութեան: Բոլոր այրերը եւ պատանիները կը մէկտեղուէին եւ անողորձօրէն կը կոտորուէին: Կիները, ծերերը եւ տղաները յառաջ կը մղուէին՝ տառապալից, հաստոր վիճակի մը մէջ, կը մեռնէին անօթութենէ եւ ծարաւէ: Անոնք՝ որոնք չէին կրնար քալել այլեւս, կը մտորակուէին, մինչեւ որ գետին իջնային. այնուհետեւ կը սպանուէին: Կարաւանը հետզհետէ կը նօսրանար. անօթութիւնը, ծարաւը, յոգնութիւնը եւ սպանութիւնները աւեր կը գործէին: Կ'առեւանգուէին կիներն ու աղջիկները, կը վաճառուէին իսլամական շուկաներու մէջ, քսան դահեկան կ'արժէր կոյս աղջիկ մը, հինգ դահեկան՝ երիտասարդ կին մը կամ այրի մը. գալով տղաներուն՝ կը տրուէին գրեթէ ձրի: Չէթէները կամ քիւրտները յաճախ չարձակուած կը գործէին հալուածա եղած կարաւաններուն վրան, կը բռնաբարէին կիները, կը կողոպտէին, կը սպաննէին:

ԱՒԵԼԻ ՎԱՏՔԱՐ՝ ՔԱՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ  
Ականատես օտար մը կ'ըսէ.

### ԵՐԵՒԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՈՒՐՈՒԱԾ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ 150-ԱՄՅԱԿԻՆ


Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը Ապրիլի 20-21-ը պիտի կազմակերպէր «Հայոց ցեղասպանութիւնը եւ սկանդինաւեան արձագանքը» թեմայով միջազգային գիտաժողով՝ նուիրուած Ֆրիտոյֆ Նանսենի ծննդեան 150րդ ամեակին:

Գիտաժողովի ընթացքում գեկոյցներով հանդէս կը գան պատմաբան-հետազոտողներ՝ Հայաստանից, Շուեդիայից, Դանիայից, Նորվեգիայից:

Միջազգային այս գիտաժողովի անցկացումը նպատակ ունի վերականգնելու Սկանդինավիա-Հայաստան յարաբերութիւնների պատմութեան այս կարեւոր, սակայն մոռացուած ու անտեսուած առանցքային դրուագները՝ քննարկելով դրանք ընդհանուր պատմութեան ու յիշողութեան համատեքստում:

Սկանդինաւեան միսիոներների ջանքերը, հիմնականում, ուղղուած էին Օսմանեան կայսրութեան տարածքում կոտորածներից տուժած հայ բնակչութեանն օգնելուն եւ նրանց շրջանում կրօնական քարոզչութիւն իրականացնելուն, որոնք, մեծամասամբ, իրականացուած էին դանիական, նորվեգական եւ շուեդական «Կանանց առաքելութեան աշխատողներ» (K.M.A.) կազմակերպութեան միջոցով:

Հայոց ցեղասպանութիւնը միջազգային մեծ արձագանք ունեցաւ՝ գրաւելով նաեւ համաշխարհային մամուլի ու հանրութեան ուշադրութիւնը: Բացառութիւն չկազմեցին նաեւ սկանդինաւեան երկրները: Շուեդիայի, Նորվեգիայի, Դանիայի կառավարութիւնները, հասարակական կազմակերպութիւնները եւ անհատ քաղաքացիները տարբեր կերպ ար-



ձագանքեցին Հայաստանում տեղի ունեցող կոտորածներին: 20-րդ դարի սկզբներին նշանաւոր սկանդինաւեցի կին-միսիոներներ Մարիա Յակոբսենը, Ալմա Յոհանսոնը, Կարէն Եփփեն, Բողիլ Կատարինէ Բիորնը եւ ուրիշներ, ստանձնելով իրենց դժուարին առաքելութիւնը, անգնահատելի օգնութիւն ցուցաբերեցին բազմաթիւ կարիքաւոր հայերի, փրկելով հազարաւոր կեանքեր ու ճակատագրեր:

Մեծ եղեռնի հետեւանքների վերացմանն ուղղուած նախաձեռնութիւնների շարքում մեծ էր նորվեգացի բեւեռախոյզ, գիտնական եւ դիւանագէտ Ֆրիտոյֆ Նանսենի ջանքերը: Ֆ. Նանսենը, հանդիսանալով Ազգերի լիգայի փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարը, արդիւնաւէտ քայլեր ձեռնարկեց ցեղասպանութիւնից յետոյ անօթեւան մնացած հայերին հայրենիք վերադարձնելու եւ քաղաքացիութիւն տալու գործում:

«Տեղահանութիւնը հոմանիշ էր սպանութեան»: Իրականութեան մէջ անհունօրէն աւելի վատթար էր՝ քան սպանութիւնը: Փոխանակ բիրտ մահուան, գոհերը դատապարտուած էին ամէնէն անմարդկային տանջանքներուն, եւ արդարացիօրէն համար անարդարանալի, բարբարոս եւ ստորին արարքները՝ թուրք իշխանութիւնը անպատկառօրէն գանտնք կ'որակէր «գիտութեան անհրաժեշտ միջոցառումներ»: Յունիսէն Օգոստոս, ամենատաք եղանակին, Վոյոր վիլյայէթներէն եւ քաղաքներէն դէպի հարաւ, դէպի անապատ շարժեցաւ մահուան թափօրը: Կ.Պոլսոյ, Չմիւռնիոյ եւ Հայկապի հայերը յարաբերաբար գերծ մնացին տեղահանութեանէն, չարչարանքներէն եւ կոտորածէն, որովհետեւ այս քաղաքներուն մէջ բազմաթիւ եւրոպացիներ կային, ականատեսներ կրնային ըլլալ դժոխային եղելութեանց: Չմիւռնիոյ մէջ, արդարեւ, գերմանացի սպաները միջամտեցին՝ արգելք հանդիսանալու համար ոճրագործութեանց:

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱԿԱՆԱՏԵՍԻ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ  
Յոյց տալու համար դաժանու-

դժբախտները որպէսզի մեռնէին անսուղու ու նօթի, եթէ չմեռնէին՝ կը մեռցնէին զանոնք: Թիֆլիսը, գարհուրելի այս հիւանդութիւնը, դաշնակիցն էր սուրին: Դիակները կը դիզուէին ճանապարհի երկայնքին, կ'ապականէին օդը:

### ԿՈՏՈՐԱԾ՝

#### ԾՆՆԴԱՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՋ

Բազմաթիւ վայրերու մէջ, սակայն, վալիներն ու թուրք իշխանութիւնները աւելորդ համարեցան տեղահանութիւնը կամ աքսորը: Ինչ հարկ կար դիմելու այդ պատրուակներուն:

Կոտորեցին հայերը՝ իրենց ծննդավայրերուն մէջ: Մծբին՝ Յուլիսի 1-ին, Պիթլիս՝ Յուլիսի 1-ին, Մուշ՝ Յուլիսի 10-ին, Մալաթիա՝ Յուլիսի 15-ին, Ուրֆա՝ Օգոստոսի 19-ին եւ Հոկտեմբերի 16-ին, ձեգիրէ՝ Սեպտեմբերի 2-ին, ալպէս, ըստ կարգի, Տիարպէրի, Միտաթ, եւայլն, եւայլն:

### ԳԵՐՄԱՆԱՅԻ ՀԻՊԱՏՈՍՆԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մուսուլի գերմանացի հիւպատոսը 1915-ի Յունիսի 10-ին հեռագրեց՝ թէ 614 հայեր - ծերեր, կիներ եւ տղաներ - Տիարպէրի մէջ լաստերու վրայ խռնուեցան եւ խեղդամահ եղան. լաստերը Մուսուլ հասան դատարկ: Գետը մարդկային մարմիններն ընկղուեց: Նման ուրիշ լաստեր պատրաստուեցան: Յունիսի 18-ին, էրզրումի գերմանացի հիւպատոսը տեղեկագրեց՝ թէ Երզնկայի օձու ջարդեր տեղի ունեցան: Հեծեկազօրաց 86-րդ գունդը, իրենց սպաներուն հրամաններով եւ ջալկցութեամբ քիւրտերու, աւելի քան քսան հազար կիներ եւ տղաներ կոտորեցին Քեմախի կիրճերուն մէջ: Պիթլիսի մէջ՝ հայերու մեծ մասը սպանուեցաւ, ինչ հարիւր կիներ ու տղաներ Տիարպիսի ջուրերուն մէջ նետուեցան: Անվախճան շարքն է այս՝ անարգ, զազրելի անգթութեանց: Հայերէն ոմանք ողջ-ողջ հրկիզուեցան իրենց տուններուն մէջ: Այն հայ գիտուորները՝ որոնք ծառայած էին թրքական բանակին, քաջաբար եւ հաւատարմաբար, եւ որոնք արժանացած էին էնվեր փաշայի իսկ մեծաբանքին՝ իրենց այդ քաջութեան եւ հաւատարմութեան համար, յետագային գիտութեամբ եղան, լծուեցան տաժանակիր աշխատանքի, բանակին ետեւ, ապա հրացանազարկ եղան իրենց երբեմնի զինակիցներուն իսկ կողմէ, հրամանով իրենց սպաներուն:

### ԹԱԼԵԱԹԻ ՇՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Գերմանացի հիւպատոսներու տեղեկագրութեանց ի լուր, եւ տեղահանութեանց բուն իմաստին խելամուտ, Գերմանիոյ դեսպանը բողոքագրեր յղեց Բ. դրան. ի գոհ: Թուրքերը նախ կ'ուրանային իրողութիւնը, ապա կը յայտարարէին՝ թէ պէտք չունէին մարդասիրութեան դասեր առնելու իրենց դաշնակիցէն: Թալեաթ պէյ շնականօրէն յայտարարեց Մեթերնիխի՝ թէ գերմանացիները, նոյն պարագաներուն մէջ, տարբեր կերպով պիտի չգործէին:

### ԴՈԿՏՈՐ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ըստ վկայութեան դր. Լեփսիուսի, աքսորականներուն երկու երրորդը ինկաւ, շնչասպառ, ճանապարհի ընթացքին, միւսները, կիսամերկ կմախացած ուրուականներ, հասան Սուրիա եւ Միջագետք, մղուելու համար դէպի անապատ եւ հոն մահանալու՝ անլուր չարչարանքներու մէջ: Դատապարտուածներու շարքերը կը քալէին ամիսներ շարունակ, եւ երբ կը հասնէին ճանապարհին ծայրը, կանգ չէին առնել, կը քալէին շուրջանակի: Կեղրոնավայրերը կը դատարկուէին ու կը լեցուէին անընդհատ: Կանխամտածուածութեամբ, յուրի դիտաւորութեամբ կը թողլէրէին



### ԼԻԲԱՆՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳՐՈՅԹ-ՏՎՈՒԹՅԱՆ ԴՆԵՑՄԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳՐՈՅԹ-ՏՎՈՒԹՅԱՆ ԴՆԵՑՄԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ

Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի տարեկան ճաշկերոյթ-հաւաքը տեղի ունեցաւ Ուրբաթ, 18 Մարտ 2011ին Phoenicia ճաշարանին շքեղ սրահին մէջ: Օրուան հանդիսավար եւ ճաշկերոյթի յանձնախումբի ատենապետ՝ Բաֆֆի Քենտրիքեանի բարեգալուստի խօսքէն ետք, վարժարանիս շրջանաւարտներէն՝ Բաֆֆի Քերպպեան (դաշնակիր ընկերակցութեամբ Տիկ. Եսթեր Ասիլեանի), իր բամբ ձայնով հնչեցուց Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգները:

Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան իր սրտաբուխ աղօթքով օրհնութիւն խնդրեց Աստուծմէ, որպէսզի կազմակերպուած հաւաքոյթին հասոյթը իր նպատակին ծառայէ՝ հասնելով Պէյրութ եւ Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի կարիքները գոհացնէ:

Պաշտօնական յայտագիրը ունէր երկու բաժին: «Տարուան Ուսուցչուհի» Տիկ. Լենա Հաւունճեան-Պոյաճեան, իր երկարամեայ առաքելութեան եւ փոքր աշակերտներուն հանդէպ ցուցաբերած համբերատարութեան համար, պարգևատրուեցաւ: Տիկին Լենային հակիրճ կենսագրութիւնը ներկայացուց Շրջանաւարտից Միութեան վարչական անդամ՝ Էլօ Սահակեան:

Ապա AMAA-ի գործադիր տնօրէն՝ պրն. Լեոն Ֆիլեան հանդէս եկաւ գովաբանական եւ քաջալերական խօսքով:

Յայտագիրին երկրորդ բաժինը տրամադրուած էր 1981-1988 տարիներու ընթացքին տնօրէնութեան պաշտօնը ստանձնած պրն. Արթուր Համալեանի պարգևատրումին՝ իբրեւ «Տարուան Տնօրէն»:

«Իր պաշտօնավարութեան օրերուն դաստիարակչական, մանկավարժական, հայասիրութեան եւ հայերէնասիրութեան, ձեռնարկներու տարբեր ոճերու, ուսման հանդէպ սիրոյ մթնոլորտ սփռելով, ինչպէս նաեւ մարդկութեան, ազգին եւ հայ եկեղեցիին ծառայելու իւրաքանչեւ ձեւեր ներմուծելով դպրոցէն ներս, աշակերտին մօտ անուղղակիօրէն դրոշմեց ԿԲՎ-ի հանդէպ պատկանելիութեան զգացումը», իր խօսքին մէջ փոխանցեց զինք ներկայացնող, Շրջանաւարտից Միութեան վարչական անդամ՝ Արփի Համբարեան: Յուշանուէրը պրն. Համալեանին յանձնեց ԿԲՎ-ի Շրջանաւարտից Միութեան ատենապետ՝ Սահակ Շամլեան:

Իրենց ներկայութեամբ երեկոն պատուեցին ԿԲՎ-ի նախկին տնօրէններ Արամ Պուլղուրճեան, Յովհաննէս Հաւունճեան եւ Արթուր Համալեան:

Գեղարուեստական յայտագիրը սկսաւ պարմանուհի Դալար Մինասեանի երկու հայկական մենապարերով, որոնք ներկայացուցան հայուհիի նագանքով:

Հետաքրքրական էր, ԿԲՎ-ի Լիբանանի Շրջանաւարտից Միութեան երիտասարդ անդամներէն՝ Շահան Քիլաղպեանի պատահական ներկայութիւնը, որ դաշնակահարի իր շնորհը ցոյց տուաւ գեղարուեստական յայտագիրն ժամանակ:

Ընթրիքի մատուցման ընթացքին, ներկայացուցաւ վարժարանի ներկայ տնօրէնուհի Տիկ. Մարալ Տէլիբմէնճեանի կողմէ պատրաստուած DVD-ին, որ հակիրճ տեղեկութիւններ կը փոխանցէր դպրոցի, յառաջդիմութեան ու արդիականացման եւ մանաւանդ աշակերտներու թիւի աճման մասին:

Ժողովրդական եւ հայրենա-



«Տարուան Տնօրէն» Արթուր Համալեան եւ Սահակ Շամլեան



Բաֆֆի Քենտրիքեան եւ «Տարուան Ուսուցչուհին» Տիկ. Լենա Հաւունճեան-Պոյաճեան

սիրական երգերով Բաֆֆի Քերպպեան ճոխացուց հաւաքոյթին մթնոլորտը, որմէ ետք Գօգօ Հայրութեան ստանձնեց բեմը՝ յաւելեալ խանդավառութիւն պատճառելով

ներկաներուն: Ձեռնարկը նախորդ տարիներու նման յաջող նկատուեցաւ բոլորին: Շար.ը էջ 17

## AMERICAN RELIABLE WINDOWS

[www.americanreliablewindows.com](http://www.americanreliablewindows.com)

**\$89** Rebate\*  
Rebate Example:  
 5 windows = \$445  
 10 windows = \$890  
 15 windows = \$1335

Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

*Beautify while increasing the value of your home with elegant,*

**18 months no interest\*** Financing O.A.C.

**ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.**

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

*Our Windows Qualify For Tax Credits*

Manufacturers rebates & deep discounts available NOW.  
 Product, Pricing and Financing to meet any Budget.

**888-804-7250**  
*Your Satisfaction is Guaranteed.*

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591



### ԻՆՉՈՒ «ՓՈՔՐ ԱԾՈՒ» ՄՆԱՑԻՆՔ

Շարունակում է 6-էն

մէկը հաւասարակշռել ընտրեալ թեկնածուներով: Մանաւանդ մեր այսպէս կոչուած ռազմավարական գործընկեր Ռուսիան, որ ձրի բնակարաններու եւ փոխադրամիջոցներու, ինչպէս նաեւ աշխատանքի ապահովութեան եւ քաղաքացիութեան հայթայթումով, իր երկրի ծայրամասերը կ'ուզէ բնակեցնել հայերով, պատճառ դառնալով Հայաստանի գիւղերու դատարկման: Ժամանակին Բիւզանդիան վարեց այդ քաղաքականութիւնը, տկարացնելով իր կայսրութեան ծայրամասին գտնուող Հայաստանը, առիթը տալով թուրք-թաթար ցեղախումբերու, որ այդ ճամբով ներխուժեան, հասնելու եւ գրաւելու Կոստանդնուպոլիսը ու վերջ տալու կայսրութեան գոյութեան:

Դարերու ընթացքին Հայաստանի թալանի ու աներածութեանց, հայրութեան կրած ջարդերու եւ կոտորածներու գլխաւոր պատճառներէն մին, արտագաղթի պատճառաւ մեր պատմական հայրենիքի մէջ մեր թուաքանակի նուազումն է: Որը դժբախտաբար կը շարունակուի եւ ահագանգային վիճակի հասած է:

#### Չուլում եւ Կրօնափոխութիւն

Չուլումն եւ կրօնափոխութեան ազդակները սերտորէն կապուած են արտագաղթի ազդակին հետ եւ ատոր բնական շարունակութիւնն են: Այստեղ կ'ուզենք արծարծել հետաքրքրական տեսակէտ մը, որ արժանի է ազգագրական ու մարդաբանական խոր ուսումնասիրութեան: Մեր կարծիքով, մինչեւ Արշակունեաց թագաւորութեան անկումը, մենք յաջողած ենք մեր մէջ ձուլել ու հայացնել օտարները: Սակայն Արշակունիներու անկախ պետականութեան կորուստէն ետք, ճրգ դարէն սկսեալ մենք սկսած ենք ձուլուիլ օտարներու մէջ: Արշակունիները հայ չըլլալով հանդերձ, ոչ միայն հայացան, այլ մեզի պարգեւեցին Քրիստոնէական կրօնք եւ սեպհական գիր ու գրականութիւն: Տրդատ Գ., Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Սահակ Պարթեւ եւ Վռամշապուհ թագաւոր Պարթեւ ծագումով հայեր էին, որոնք անուրանալի ներդրում ունեցան հայ ազգի գոյատեւման պայքարին մէջ: Յստակ է, որ կեդրոնաձիգ անկախ պետութեան մը բացակայութեան պարագային, շատ աւելի դժուար է ձուլման դէմ պայքարելը: Միջանկեալ ըսենք, որ այս իրականութեան համոզուած պէտք է ըլլային Հայաստանեայց Եկեղեցւոյ առաջնորդները Արշակունեաց թագաւորութեան տկարացումին ի տէս, ու հետեւաբար փորձած այդ բացը գոցել եկեղեցիի հօգրացումով: Եղիշէի «Վարդանանց Պատմութիւն»ը, որ փաստագրական պատմութիւն ըլ-

լալէ աւելի դիւժազներգութիւն է, այս պրիսմակով պէտք է դիտել: Հետեւաբար մեծ եղած է Հայաստանեայց Եկեղեցւոյ պայքարը ձուլման եւ կրօնափոխութեան վտանգներուն դէմ, որոնք սակայն բաւական մեծ թիւով հայորդիներ խլած են դարերու ընթացքին: Չհաշուած ձուլման եւ կրօնափոխութեան գոհ դարձած աշխարհացրիւ հայրութեան թիւը, միայն Եղեռնի տարիներուն, բռնի կրօնափոխութեան գոհ դարձած եւ հոսկ ձուլուած հայերու թիւը նշանակելի տոկոս մը պէտք է կազմած ըլլայ: Այս փաստին ակնարկելով էր, որ Հրանդ Տինք, իր նահատակութիւնէն ամիսներ առաջ կը յայտարարէր, թէ ներկայ թուրքիոյ բնակչութեան մէջ անոնց թիւը կը գնահատուի մօտ 1.5էն 2 միլիոնով:

#### Քրիստոնէական Կրօնքը

Մեծ է կրօնքի դերը ազգերու պատմութեան մէջ, մանաւանդ հայ ազգի պարագային, որ եղաւ առաջինը աշխարհի մէջ, որ պետականորէն ընդունեց Քրիստոնէութիւնը որպէս երկրի պաշտօնական միակ կրօնք: Մինչ մեր ժողովուրդի մեծամասնութիւնը կ'ընդունի Քրիստոնէութեան բարերար ազդեցութիւնը մեր ինքնագիտակցութեան կերտման ու հետեւաբար մեր գոյապահպանման պայքարին մէջ, կայ նաեւ այն տեսակէտը, որ Քրիստոնէութեան ընդունումով ռազմասէր հայը դարձաւ խաղաղասէր, մեղկացաւ, կորսնցուց պայքարելու ունակութիւնը եւ ուրեմն թիրախ դարձաւ յարձակումներու եւ կոտորածներու: Այսպէս մտածողները արդեօք ի՞նչ պատասխան ունին այն փաստին, որ Քրիստոնէութեան ընդունումով ի՞նչու համար միայն մենք մեղկացանք, մինչ ուրիշ Քրիստոնէայ ազգեր ռազմական նուաճումներ արձանագրեցին եւ կայսրութիւններ հաստատեցին: Քրիստոնէութեան ընդունումը ի՞նչու չի մեղկացուց այն հայորդիները, որոնք դարեր շարունակ գրաւեցին Բիւզանդական կայսրի գահը: Հետեւաբար մենք չենք բաժնէր այն կարծիքը, որ մեր «փոքր ածու» մնալու պատճառներէն մին Քրիստոնէութեան ընդունումն էր: Այս ըսելով հանդերձ, պէտք է նաեւ մտահան ընել այն վարկածը, որ դարերու ընթացքին հայուն մօտ հետզհետէ արմատացաւ ճակատագրապաշտ մտածելակերպը, ի հեճուկս գործօն քաղաքականութեան հետապնդման: Հայաստանեայց Եկեղեցին, ոչ անպայման Քրիստոնէական կրօնքը, ի՞նչ դերակատարութիւն ունեցաւ այս մտափոխութեան հետ, կը կարօտի անկեղծ ու քննական ուսումնասիրութեան:

Շարունակութիւնը յաջորդիւ

### ՆԱՍԱԿ ԹՈՒՐԲ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Շարունակում է 14-էն

«Թուրքիան՝ թուրքերին» ծրագիրն էր, որով Անատոլիան մաքրուեց հայ, յոյն, հրեայ, քրիստոնէայ եւ այլ տարրերից: Նրա կարծիքով, այդ հողերի վրայ վերջին 96 տարում իրագործուել է 10 ցեղասպանութիւն (չորսը բաժին է հասել քրտերին), որոնցից ամենազանգուածայինն ու կազմակերպուածը Հայոց Ցեղասպանութիւնն էր:

Երկրորդն առնչուած է Ազատագրութեան պատերազմի հետ, որի ֆրիանսական աղբիւրը բոլշեւիկեան Ռուսաստանի տրամադրած զէնքի եւ դրամի օգնութիւնից զատ, հայերից բռնազաւթուած ինչքն ու հարստութիւնն էր:

Եւ վերջապէս երրորդ պատճառը՝ Հայոց ցեղասպանութեանը մասնակից ոճրագործները, ում ձեռքերը թաթարուած են անմեղ արեան մէջ, նորահիմն հանրապետութեան կառավարական եւ դիւանագիտական ընտրեալների ցանկում էին: Ահա ինչու է այսօր ձախողում թուրքիայի ժառանգորդ պետութիւնը հարցի լուծման բոլոր ծրագրերը:

Սա ես չեմ ասում, սա ասում է թուրք անկողմնակալ մտաւորականը, յաւելելով, որ թուրքիայի պետութիւնը միայն մի ելք ունի ուրացութեան խաւար փակուղոց՝ ապահինել ապաշխարանքի լոյսին: Այլապէս ամէն անգամ Հայոց ցեղասպանութիւն եզրը լսելով, մշտապէս կորցնելու է ողջախոհութիւնը՝ չալտնուելով խելակորոչս վիճակում: Իսկ խելակորոչս պետութիւնը, իր կեղծ ժողովրդական կարգախօսներով որքան էլ երկու ձեռքով եւ երկու ոտքով թակի Եւրամիութեան դռները, այնտեղ մշտական գրանցում չպէտք է ստանայ:

Գերմանացիները խիզախեցին ճանաչել հրէական հողքոստը, ուսուներն էլ, 70 տարի անց, ընդունեցին լեհական կատինը: Հերթը ձերն է: Ուրեմն, մի՛ չապաղէք ճանաչել Հայկական ցեղասպանութեան պատմական անհերքելի փաստը:

Սակայն քաղաքականութիւնը թողնենք քաղաքագէտներին ու պետական այրերին, մենք գրող ենք, եւ մեր պարտքն է միմեանց ճանաչեցնել երկու հասարակութիւններին զրի եւ խօսքի միջոցով, համոզել, որ Ցեղասպանութեան ընդունումը ոչ թէ կը նսեմացնի թուրք ազգին, այլ ընդհակառակը՝ կը վեհացնի: Քանի դեռ իւրաքանչիւրի մէջ չի կայացել Հայոց ցեղասպանութեան Նիւրնբերգը, աւելին՝ ոճիրը կեղծելով կամ լուրթեան մատնելով, ակամայ դառնում ենք դրա մասնակիցը:

Գրքիդ շնորհանդէսին դու խօսեցիր շեմերը լաղթահարելու մասին: Շատ գեղեցիկ խօսեցիր: Ասացիր, որ շեմեր կան նաեւ ժողո-

վուրդների եւ երկրների միջեւ, որոնք պէտք է ոչ թէ արգելք լինեն, այլ անցակէտ: Հայ-թրքական սահմանը դեռեւս փակ է, եւ դու շատ ժամանակ կորցրիր Անքարայից մինչեւ Երեւան, մինչդեռ կ'ուզեայիր ուղիղ թուրքով հասնել՝ ձեր ազգային թիւրքիւններում եւ հայ ժողովրդական տաղիկներում գովերգող «սրտից սիրտը տանող» ճանապարհով: Երբեմն էլ շեմերի վրայ կրակ է լինում, ասացիր, եւ եթէ շեմն անցնելու վարանումը երկար տեւի, ապա օտարացման տառապանքը կարող է վերածուել հիւանդութեան, ախարի:

Աւաղ, շեմն անցնելու համար բաց դուռ է հարկաւոր, իսկ դուք կրնակորի փակել էք բոլոր դռները՝ եւ՛ հոգու, եւ օճախի, եւ երկրի առջեւ...

Մի բան ճշմարիտ է, եթէ վաղը Ցեղասպանութեան փաստը ԱՄՆ-ն էլ ընդունի, իսկ ու համը ձեւացող միւս երկրներն էլ, բանակցութիւնների սեղանի շուրջ հայերն ու թուրքերն են նստելու, - եւ հենց թուրք հասարակութեանն է պատկանում վերջին խօսքի իրաւունքը:

Բարեբախտաբար, ժխտողականութեան անթափանց պատն արդէն ձաքեր է տալիս: Ցեղասպանութիւնը հրապարակաւ ընդունել են Նոբելեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկը, անուանի պատմաբան Թաներ Աքչամը, հրատարակիչ Ռազմի Զարաթուլուն..., հարիւրաւոր այլ խիզախ անհատներ, ովքեր չեն ուզում հաշտ ապրել ստի ու կեղծիքի հետ:

Հրանդ Տինքի սպանութիւնը ցնցեց աշխարհը (չա՞տ բան է փոխուել գաղթական Միհրանի ժամանակներին), եւ նրա թաղման օրը ծայր առաւ «Ես Տինքն եմ, ես հայ եմ» հանրային շարժումը: 2010 թ. Ստամպուլի կայարաններից մէկում (որտեղից 1915-ին սկսուեց հայ մտաւորականների բռնազաւթը), տեղի ունեցաւ բողոքի ցոյց եւ մոմավառութիւն: Վերջերս էլ թուրք մտաւորականութիւնը համացանցով ստորագրահաւաք կազմակերպեց Ցեղասպանութեան ճանաչման օգտին:

Երկխօսութիւնն արդէն սկսուել է, եւ ոճրի դատապարտումը պահանջում է հասարակական բազմաձայնութիւն:

- էլի մէկ ձայն:
- Քո՛ ձայնը:
- Յանուն պատմական ճշմարտութեան:
- Յանուն նրանց, ովքեր չեն պղծելու իրենց շուրթերն անէժքով:
- Յանուն նրանց, ովքեր գալու են Պատմութեան բեռն ու Ապագայի մարտահրաւրները ժառանգելու մաքուր խղճով ու մաքուր ձեռքերով:
- Յանուն մեր գաւակների, ում նոյն արեւն է ջերմացնում՝ անկախ ազգութիւնից, մաշկի գոյնից, խօսուածքից եւ բարոյական ընտրութիւնից:

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակում է 16-էն

լորին կողմէ, այդ մէկը զգացին Միութեան անդամները, երբ հաւաքուցի ձեռքերին ներկաները գոհ սրտով եւ ժպտադէմ կը մեկնէին ճաշարանէն, խոստանալով՝ յառաջիկայ տարիներուն ալ անպայման ներկայ գտնուիլ, իրենց հետ բերելով այլ կեդրոնականցիներ:

Օրդ. Քրիսթինա Ներսիսեան,


իր արհեստավարժօրէն նկարած նկարներով անմահացուց երեկոն: Նկարները դիտելու համար կը խնդրուի այցելել ստորեւ նշուած Flickr կայքէջը:

http://www.flickr.com/photos/theportfolio/sets/72157626198482215/detail/


Բոլորին վարձքը կատար:

ԿԻՎ-ի Շրջանաւարտից Միութիւն

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծածախնայեցողութեան և մանուկներու Քայրափոքացիք բաժնում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային և մկանային ցտեք:  
Խոթեցողութիւն վթարի հետեւանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

«ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԵՐՉԱԴՈՐ ԱՐԵՒԵԼՔ»

Շարունակում է 15-էն

ՈՃԻՐԸ ԵՒ ՈՒՐԱՑՈՒՄԸ

Բ. ԴՈՒՆԸ, այսինքն իթթիհաս- տական թուրքերը, չէին ուզեր որ գերմանացիք միջամուխ ըլլային իրենց ներքին գործերուն: Գերմանական կառավարութեան ջանքերը՝ վերջ տալու համար վայրագութեանց, ապարդիւն մնացին: Բայց գերմանացի ակադեմիկներու տեղեկագրութիւնները անողոք փաստարկութիւններն են դաշնակից թուրքերու գործած ոճիրներուն: Այդ տեղեկագրութիւնները ցոյց կու տան ոչ միայն տմարդութիւնը դահիճներուն, այլև անհերքելիօրէն կ'աղաղակեն՝ թէ ամէն ինչ կատարուեցաւ ժէօն-Թիւրքերու եւ իրենց կոմիտէին կողմէ մանրամասնօրէն պատրաստուած ծրագրի մը համաձայն: Յետագային ժէօն-Թիւրքերը վատօրէն ուրացան թէ՛ ոճիրը եւ թէ՛ անոր կանխամտածուած պատրաստութիւնը: Այդ ուրացումը չփրկեց զիրենք բարոյական խարանուծէ:

ԴԻՒԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Գերման դեսպանը, Պարոն Վանկենհայմ, գրեց Պերլին, Յունիսի 15-ին, 1915-ին, թէ «Թալեաթ իմացուց թէ Բ. ԴՈՒՆԸ կ'ուզէ օգտուիլ պատերազմէն, իր ներքին թշնամիներէն ձեռքազատուելու համար, անարգել, առանց օտար դիւանագիտական միջամտութեանց»: Յունիսի 7-ին, ան դարձեալ գրեց Պերլին. «Տեղահանութիւնները կը կատարուին այնպիսի նահանգներու մէջ, որոնք պատերազմական սպառնալիքի տակ չեն. այնպիսի ձեռով մը, որ կասկած չի թողուր՝ թէ թուրք կառավարութիւնը կը հետամտի հայ ցեղին ջնջման Օսմանեան կայսրութեան մէջ»: Յունիսի 10-ին, 1916-ին, Կոմս Մեթերնիխ կը հեռագրէ Պեթման-Հոլլէկի՝ թէ թուրք կառավարութիւնը իր հետամտութեանէն մագաչափ չի շեղիր, ի հեճուկս գերման

ներկայացուցիչներու առաջարկին, ի հեճուկս Մ. Նահանգներու դեսպանին ազդարարութեան, ի հեճուկս Սրբազան Պապին միջամտութեան: Լուծել հայկական հարցը, հայ ցեղին ջնջումով. անա՛ղիւս ծրագիրը, գոր կ'ուզէ իրագործել թուրք կառավարութիւնը:

ԳԱՂՏՆԱԳԻՐ ՆԱՄԱԿԸ

Այս մասին ո'եւէ տարակոյս չի թողուր հետեւեալ գաղտնագիր նամակը, որ Սեպտեմբեր 15-ին ուղղուած էր Հայէպի ոստիկանական պիւրոյին. «Կառավարութիւնը վճռած է բնաջինջ ընել Թուրքիա բնակող բոլոր հայերը: Ամէն անոնք՝ որոնք կ'ընդդիմանան այս հրամանին, բարեկամներ պիտի չհամարուին կառավարութեան: Որքան ալ ցաւալի թուին ձեռք առնուած միջոցները, առաջադրեալ նպատակին հասնելու համար՝ պէտք է խեղդել խղճատանքի ձայնը եւ սեփական մարդասիրական զգացումները, եւ վերջ տալ այս ժողովուրդին գոյութեան, առանց խնայելու կիներուն, տղաներուն եւ հիւանդներուն:

Ստորագրուած՝ Ներքին Գործերու Նախարար ԹԱԼԵԱԹ»

Այս գաղտնագիր նամակին լուսանկարը հրատարակուած է Աագէ Մ. Բենեդիկտոսի գրքին մէջ, «Հայերը», էջ 259

Գոբենհակ, 1925:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԷՐ ԱՅԼԵԻՍ»

Օգոստոսի 31-ին, 1915-ին, Թալեաթ պէյ յայտարարեց գերմանացի դիւանագէտներուն, թէ «հայկական հարցը գոյութիւն չունի այլևս. ճիշդ կը խօսէր, քանի որ, այդ պահուն, վերջ գտած էին բոլոր տեղահանութիւնները: Սակաւթիւ վերապրողներ կային միայն. գանոնք ջնջելը դժուար էր: (էջ 272-278)

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԻՈՆԸ ԵՒ ԱՐԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Շարունակում է 13-էն

աւելի ուժեղ ապահովութիւնը ցանկալով: Հայեր արձանագրուեցան Միացեալ Նահանգներէն, Ֆրանսայէն եւ Պալքանեան երկիրներէն գումարտակներ կազմելով դարձեալ Կիպրոսի մէջ՝ Ֆամակուստայի մերձակայ ռազմավայրերուն մէջ: Պահ մը հաշիւը ճիշդ դուրս եկաւ կարծես երբ 1918 թուի զինադադարին Գերմանիա եւ Իտալիա պարտուեցան, իսկ Թուրքիա տկարացած, կռիւի ճակատը մնաց բաց Ֆրանսայի եւ Անգլիոյ առջեւ: Այս երկուքը յառաջացան դէպի Պաղեստին՝ երուսաղէմ մտնելու դիտաւորութեամբ, եւ սակայն հոն, Պաղեստինի Արարայի բարձունքին Գերմաններու դիմադրութեան հանդիպեցան:

Անգլիական բանակի զորավար էտմընտ Ալլենպի դժուարութեան մատնուած էր Արարան գրաւելու եւ յառաջանալու իր քայլին մէջ: Պարտուած կամ տկարացած, Գերմանիա եւ Թուրքիա իրենց հրետանիները բերած կը հարուածէին անգլիական եւ ֆրանսական միացեալ ճակատը: Հայ կամաւորները, եւ կամ նոյնն է Լէգէոնականները, հասան ճիշդ ժամուն եւ 1918 Սեպտեմբեր 18-ին եւ 19-ին, հզոր յարձակում գործեցին Արարայի բարձունքին եւ գրաւեցին զայն: Կռիւր դադրեցաւ երկրորդ օրը՝ Սեպտեմբեր 19-ին եւ զորավար Ալլենպի մի քանի շաբաթ ետք յաղթական մուտք գործեց երուսաղէմ: Արարան քաջարի հայերուն համար միջոց պիտի ըլլար իրենց նպատակին համար որ էր Կիլիկիան: Անոնք ինչ գործ ունէին Պաղեստինի մէջ անգլիացւոյ

հաշուին միայն կուուելով: Միջոցը դաւաճանեց նպատակին:

Հայեր տուին բարձր գին: 23 հայ լէգէոնականներ զոհ գացին կռիւին եւ 76 հոգիներ ալ վիրաւորուեցան, հաւատարմով հայ դատին եւ Կիլիկիոյ անկախութեան գոր Ֆրանսա խոստացած էր տալ հայերուն: Դժբախտաբար կամ լաւ եւս դաւաճանաբար հակառակ տրուած խոստումին եւ հայերու տուած գերագոյն անձնագոհութեան, Կիլիկիան երբեք չտրուեցաւ հայերուն իբրեւ իրենց հարազատ հայրենիքը: Պատմութիւնը թող միշտ չի շէ անունները 23 հերոսներուն որոնք եղան.

ԱՐՇԱՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ (քղեցի), ՍԻՄՈՆ ԱՆԹԱՌԱՄԵԱՆ (խարբերող), ԱՐՇԱԿ ԱՍԼԱՆԵԱՆ (սեբաստացի), ՏԻԳՐԱՆ ՓԵՋԱՐԵԱՆ (քեսապցի), ՍԱՐԳԻՍ ԳԱՍԱՊԵԱՆ (արաբկիրցի), ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ (պանտրմացի), ՄԵԼՔԻՍԵԹԷԿ ԶԱՆՈՅԵԱՆ (չնքուշցի), ԳՈՒՐԳԷՆ ԶԻԼՃԵԱՆ (խաթանապուլցի), ՄԻՍԱԲ ԹԱՍԼԱՔԵԱՆ (մուսալեռցի), ՄԻՍԱԲ ՀԱՎՈՒՆՃԵԱՆ (էքպէզցի), ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ (չմշկածագցի), ՄԱՐՏԻՐՈՍ ՃԻՆԿԻՐԵԱՆ (հիւսենիկցի) ԾԵՐՈՆ ՄՍՐԼԵԱՆ (քեսապցի), ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՊԱՅԵԱՆ (չնքուշցի), ՅԱԿՈԲ ՊԵՏԻԿԵԱՆ (այնթապցի), ՊՕՂՈՍ ՊՈՒԼՈՒՏԵԱՆ (ծովցի), ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ (արաբկիրցի), ՄԱՆՈՒԿ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ (ալպիստանցի), ՍԱՐԳԻՍ ՏԷԼԷԿԵԱՆ (մուսալեռցի), ՅԱԿՈԲ ՔԵՇԵԱՆ (կեսարացի), ՍԱՀԱԿ ՔԻՍՔԱՆԵԱՆ (սեբաստացի), ՆԻԿՈՂՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ (սեբաստացի), ՊՕՂՈՍ ԹԵՐԵՔԵԱՆ (չնքուշցի):

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

ՎԱՐՉՈՒ ՏՈՒՆ PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից Լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

REQUEST FOR PROPOSALS (RFP #7536) FAMILY ASSET DEVELOPMENT PROGRAM The Housing Authority of the City of Los Angeles and the City of Los Angeles jointly invite proposals from qualified consortiums to implement the Family Asset Development Program as part of the "Family First Plan" (formerly known as the Human Capital Plan). Copy of the RFP may be obtained from HACLA beginning April 4, 2011 via <http://www.hacla.org/ps/> or from CDD via [http://www.cdd.lacity.org/home\\_bidsrpf.html](http://www.cdd.lacity.org/home_bidsrpf.html) or send an e-mail to [CDD.planning@lacity.org](mailto:CDD.planning@lacity.org) or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 5:00 P.M., by May 10, 2011.

4/14, 4/21/11  
CNS-2074678#  
MASSIS WEEKLY

REQUEST FOR PROPOSALS (RFP# 7545) FURTHER INVESTIGATION, ASSESSMENT & DEVELOPMENT OF REMEDIAL ACTION PLAN FOR 9901 SOUTH ALAMEDA ST. IN THE COUNTY OF LOS ANGELES The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified Consultants to further investigate, assess and develop a feasibility study, health risk assessment and remedial action plan under the direction of the California Department of Toxic Substances Control for 9901 South Alameda Street in the County of Los Angeles ("Service"). Copies of the RFP may be obtained beginning April 11, 2011 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., May 13, 2011.

4/21, 4/28/11  
CNS-2077571#  
MASSIS WEEKLY



### ԱՊՐԻԼ 24-ԵԱՆ ԽՈՐԵՐ

#### Շարունակում է 1-ին

գործեր հետապնդել:

Արդարեւ, մեր սուղմիջոցները ամբողջապես կեղծում են ընդհանուր առմամբ միջազգային նախաձեռնում գործընթացին վրայ, բոլորովին անտեսում են ներքին և արտաքին իրավիճակը՝ հատուցում են վերականգնում: Առ այսօր, ոչ մէկ նախապատրաստական աշխատանք տարուած է ստեղծելու այն իրական ենթահողը, որում վրայ պիտի հիմնուի մեր արդար պահանջը: Վերանգրքեր են անդին, հատուցման կամ վերականգնման յստակ ընդունում կամ ձեռնարկում է տրուած: Իրաքանակի վրայ իր անձնական պատկերացումը ունի հատուցման ձեռքի եւ չափի վերաբերեալ: Աւելին, մենք մեզ համոզուած ենք, որ այն օրը երբ թուրքի վերջապէս նախապատրաստութիւնը, մնացեալ հարցերը ինքնաբերաբար պիտի լուծուին՝ նիշդ մեր ակնկալածին պէս: Այս պարզամիտ եւ միեւնոյն ատեն վտանգաւոր մտեցումը յղի է լուրջ հետեւանմանը: Եթէ մենք պատրաստ չենք մտածելու եւ տեսնելու ցեղասպանութեան նախաձեռնում անդին առնուելիք քայլերը, ապա ինչպէս կրնանք ակնկալել, որ համաշխարհային ընտանիքը կամ թուրքի պատրաստ պիտի ըլլան: Ընդհակառակը, այսօր կայ լուրջ վտանգ, որ թուրքի յղումը ցեղասպանութեան նախաձեռնում փաստով, միջազգային ընտանիքին համար հայկական հարցի օրակարգը սպառած պիտի ըլլայ եւ մենք կատարուած իրողութեան առջեւ պիտի գտնուինք: Իսկ ինչ արժէք ունի նախաձեռնումը առանց հատուցման:

Միւս կողմէ, Հայաստանի անկախացումէն 19 տարիներ անց, հայկական հարցի հետապնդման խնդրով բացարձակապէս համադրում են համագործակցութիւն չկայ Հայաստանի ու Սփիւռքի միջեւ: Ինչպէս արձանագրութիւններու միջոցով ցոյց տուաւ, հսկայանջրպետ մը կայ սփիւռքի ու Հայաստանի իշխանութիւններու պատկերացումներուն եւ ակնկալութիւններուն միջեւ: Անշուշտ այդ տարբերութիւնները բնական եւ օրինակաւ են, սակայն կարեւորը այն է, որ հայութեան երկու հատուածները հասկնան եւ գնահատեն իրաքանակի պետքերը եւ ակնկալութիւնները:

Այս հարցերու շուրջ հրապարակային քննարկումներն ու խորհրդածութիւնները պիտի շարունակուին յառաջիկայ ամիսներու ու տարիներու, որպէսզի հասնին մեր միլիոնաւոր նահատակներու կտակի իրականացման ու արդարութեան վերահաստատման: Միւս կողմէ, դարձեալ կը խոնարհիմք քիւրաւոր նահատակներու անմահ յիշատակին առջեւ:

«ՄԱՍԻՍ»

### ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՐԱՆ 3. ԹՈՒԹԻԿԵԱՆ

#### Շարունակում է 5-ին

տեսութեան: Անոնք թօթափած էին ամէն անձկութիւն եւ յուսաբեկութիւն եւ խանդով ու աւիւնով, հաւատքով ու վճռակամութեամբ սողորոտած՝ յարուցեալ Յիսուս Քրիստոսի աննահանջ ախոյեանները դարձած էին:

Յարուցեալ Քրիստոսի քառասնօրեայ երեւումները անոր աշակերտներուն եւ հետեւորդներուն աւելի եւս ամրապնդած էր անոնց հաւատքը: Ա՛յդ հաւաքական հաւատքէն էր որ ծնաւ Քրիստոնէական Եկեղեցին: Եկեղեցին ալ, իր հերթին, ծնունդ տուաւ Աւետարաններուն եւ Նոր Ուխտի միւս գիրքերուն:

Չատկուան հրաշքը, ոչ միայն Յիսուսի աշակերտներուն, այլ ամէն դարու մէջ ապրող քրիստոնեաներուն ներշնչած է, եւ կը շարունակէ ներշնչել յաւիտենական կեանքի անմեռ եւ անմար յոյսը՝ թէ՛ կեանքը աստեանական չէ միայն, այլ նաեւ անդենական. կա՛յ նաեւ անդրշիրմեան կեանք մը, յաւիտենական կեանք մը:

Քրիստոնեան հաստատ գիտէ, թէ իրեն համար պահուած է «կեանք մը ետքի», որովհետեւ իր Տէրը յարուցիւն առած է եւ կ'ապրի

յաւէտ, ինքն ալ պիտի անվերջ եւ անվախճան՝ Անոր հետ:

Չատկուան հրաշքը, ոչ միայն Յիսուսի աշակերտներուն, այլ ամէն դարու մէջ ապրող քրիստոնեաներուն ներշնչած է, եւ կը շարունակէ ներշնչել, ամենօրեայ յաղթական կեանք ապրելու վստահութիւնը:

Յարուցեալ Քրիստոսի յաղթութիւնը կը դառնայ քրիստոնեաներուն կենսունակութեան աւիւշը, կ'ըլլայ հզոր ուժամղիչը՝ անոնց կեանքներուն եւ կը մղէ գանոնք դիմադրաւելու ամէն տեսակ տագնապներ, դժուարութիւններ եւ խութեր: Անոնք, Առաքեալին նման, իրենց հոգեկան ոգորումներուն մէջ կրնան յայտարարել. «Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով»:

Թող Չատկուայ հրաշքը իր ներգոր ազդեցութիւնը ունենայ ամէն մարդու կեանքին, որպէսզի կարենայ լիաթոք գոչել.

«Քրիստոս յարեալ ի մեռելոց. Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Վեր. Դակո. Վահան Յ. Թուրքիկեան  
Գործադիր Տնօրէն՝  
Հայ Աւետարանական  
Համաշխարհային Խորհուրդի

### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՏԳԱՍԸ

#### Շարունակում է 5-ին

այն որ էականը ոչինչէն կեանքի կոչած է, կարող է նաեւ մահէն կեանքի կոչելու գանոնք:

Բայց կան մարդիկ որ, հետզհետէ աւելի զարգացող այս դարուն մէջ, աւելի քննադատ կը դառնան եւ կը պահանջեն որ Քրիստոսի յարուցեան ալ փաստեր տրուին, ապա թէ ոչ ան կը մնայ առեղծուած եւ կը դատուի առասպելներու շարքին:

Քրիստոնեայ հաւատքը երբեք չէ դաւանած եւ ուսուցած թէ յարուցիւն գիտական գիտելիքներու մաս կը կազմէ: Եկեղեցին հաւատքը կը հռչակէ, ոչ թէ գիտութիւն: Սակայն ատով բնաւ չի նուազիր իր հեղինակութիւնը, ոչ ալ կը խախտին իր ուսուցման հիմքերը:

Արդարեւ, գիտութիւն եւ հաւատք տարբեր մարդի, տարբեր մակարդակի արժէքներ են: Մինչ գիտութիւնը շօշափելի, նիւթական տարրերու վրայ կը հիմնադրէ իր հաստատածը, հաւատքը վստահելի եւ հաւատարմի էականութիւնն է կ'աւանդէ իր ուժը: Գիտութեան հաստատածը, երբ լուրջ փաստերու վրայ կառուցուած է, ոչ ոք կրնայ մերժել, հաւատքի դաւանածը միշտ կարելի է մերժել երբ զայն դաւանողի պարկեշտութիւնը, ճշմարտախօսութիւնը առարկելի է:

Գիտութեան տուեալներուն հաւատարմով արժանիք չենք շահիր, որովհետեւ ստիպուած ենք ընդունել գանոնք, ուզենք կամ չուզենք, իսկ հաւատքին մեր հաւանութիւնը տալով՝ այո՛, որովհետեւ կամովին կը ճանչնանք թէ զայն մեզի հարողորդը պարկեշտ ու ճշմարտախօս է, եւ այսպէս կ'արժանանաք անոր բարեկամութեան եւ, հոգեւոր մարդի մէջ՝ համապատասխան վարձատրութեան:

Գալով Քրիստոսի յարուցեան, որով վկայութիւնն է որ մեզի ապահովութիւն կու տայ թէ ստոյգ

եղելութիւն է:

Քրիստոս ինքը նախ բազմաթիւ անգամներ ըսաւ թէ «Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը, մահուան պիտի դատապարտուի, պիտի խաչուի, բայց երեք օր ետք յարուցիւն պիտի առնէ»:

Կը բաւէ, մեզ հաւատքի մղելու համար:

Այո՛, մէ՛կ պայմանով. կը հաւատարմք թէ ոչ Քրիստոսի աստուածութեան: Եթէ այո՛ չունինք ուրիշ ելք եթէ ոչ՝ հաւատալ նաեւ անոր յարուցեան: Անհաւատը անկարող է հաւատալու Քրիստոսի յարուցեան:

Ապա՛ առաքեալներու վկայութիւնը: Ո՛չ խօսքով միայն, այլ արեան հեղուքով: Ո՞վ իր կեանքը կը զոհէ ցնորքի կամ երեւակայական դէպքի համար: Ի՞նչ շահ ունէին անոնք մեռելալի մը յարուցեան մասին վկայելով, մանաւանդ շրջապատի մը դիմաց որ կիրքով ու ատելութեամբ վառուած, առիթի կը սպասէին հարուցեալու համար գանոնք: Այո՛, վարձատրուեցան անոնք, բայց ինչո՞վ, զերագոյն սիրոյ պարգեւով, նահատակութեամբ:

Յարուցիւնը, յաղթանակի տօն, տօնն է նաեւ յոյսի: Յոյս՝ որ ապահովութիւն կը ներշնչէ թէ մենք ալ յարուցիւն պիտի առնենք: Հաւատքի մաս է այս մեզի համար: Հաւատք՝ որ համոզում գոյացուցած է մեր մէջ թէ Քրիստոս, ո՛չ միայն ինքը յարուցիւն առաւ, այլ երաշխաւորեց մե՛ր եւս, սեփական յարուցիւնը: Կա՞յ ասկից աւելի կազդուրիչ ու մխիթարական տեսլական՝ մեր այս անցաւոր ու խաբուսիկ գոյութիւնը իմաստաւորելու եւ արժեւորելու համար:

Այո՛, եթէ յարեա՛ւ Քրիստոս, մենք եւս իրեն հետ պիտի յառնենք:

Ա՛յս է մեր համոզումն ու հաւատքը:

Մանուէլ Եպս. Պաթագեան

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան**  
**ժամը 10:00-ից 12:30**  
**Կլէմտէյի 380-րդ կայանից**

**ՄԱՍԻՍ** **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax :-----

**ԱՇԽԱՏՈՂ ԿՈՒՂՈՒԻ**

Փասսատիւայի մէջ հայկական հաստատութիւն մը կարիքն ունի տնային պայմաններով՝ ՀԻՆ ԳԻՐՔԵՐ ՆՈՐՈԳՈՂԻ մը (վճարումի լաւ պայմաններ):  
 (626) 354-5924 (Վահէ)



### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ ՄԱՅՐԵՐՈՒՆ՝ ԻՐԵՆՑ ԵՐԱԽԱՆԵՐՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

Երբ կնկայ մը որպէս մայր դերը սկսի, ան դժուարութեան կրնայ հանդիպիլ երախային վերաբերեալ գործնական կարգ մը հարցերու առնչութեամբ: Արդարեւ, հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք կարգ մը խրատներ, որոնք կը դիւրացնեն մօր պարտականութիւնը եւ կը կանխեն այդ ճամբուն սկիզբին գործուած սխալները:

\* Երբ առաջին գաւազնիդ համար սենեակ պատրաստես, աւելի զգոյշ եղիլ որ անոր համար ապահովես ապահովութեան եւ անվտանգութեան չափանիշերը, փոխանակ չափազանցուած կերպով սենեակին ձեւաւորման ու գոյնեւորման մասին հետաքրքրուելու:

\* Մանուկին անկողինին վրայ կախուող խաղալիքները ընդհանրապէս հոն կը դրուին զինք զբաղցնելու եւ անոր ուշադրութիւնը գրաւելու: Հետեւաբար, փորձէ անոնցմէ հաւաքածոյ մը ունենալ, պայմանաւ որ անոնց գոյները հօրաւոր եւ աչքաու ըլլան: Ժամանակի ընթացքին փոխն ու փոխ կախէ զանոնք՝ անոր հետաքրքրութիւնը գրգռելու: Սակայն, երբ նկատես, թէ ան չ'ընդառաջեր նորերուն, հինները վերադարձուր:

\* Մանուկներու խնամքը պատրաստութեան խնամքն է: Երբ ան չ'ընդառաջեր նորերուն, հինները վերադարձուր: Մանուկներու խնամքը պատրաստութեան խնամքն է: Երբ ան չ'ընդառաջեր նորերուն, հինները վերադարձուր:

հազուադէպ հոն դասաւորելու, սակայն շուտով պիտի նկատես, որ այս պահարանը ունի իր հսկայական օգուտները՝ հազուադէպ դասաւորման աշխատանքին առնչութեամբ: Հետեւաբար, երբ երեխայիդ համար որեւէ հազուադէպ կտոր գնես, կախիչը պահէ, որովհետեւ պահարանին մէջ պէտք պիտի ունենաս անոր:

\* Կարգ մը պատիկներ շատ կը կապուին իրենց պատիկ բարձրուն կամ բամպակեայ ծածկոցներուն, եւ իրենց համար անհրճար կ'ըլլայ առանց անոնց քնանալը: Հոս եւս պէտք է անոնցմէ այլ նմոյշ մը ունենաս հետոյ, երբ երեխադ տունէն դուրս հանես եւ անոր քնանալու ժամուն գուզողիպի:

\* Եթէ փափաքես երախադ գրկել kangourou շալկելիքներէն օգտագործելով, զգոյշ եղիլ որ անոր տոկուն տեսակը ընտրես, որ թէ՛ երեխային եւ թէ՛ քու կունակդ կայուն կը պահէ, եւ միաժամանակ զինք բարձր դիրքի վրայ կը պահէ՝ քու կզակիդ մակարդակին: Այն շալկելիքները, որոնք երեխային

դէմքը կուրծքիդ մակարդակին կը հասցնեն, յարմար չեն եւ հանգստութիւն չեն ապահովեր անոր:

\* Երբ երեխան քալելու սկսի, այլեւս կրնաս ձերբազատուիլ այն ծանր կառքէն, գոր նախապէս կ'օգտագործէիր: Սակայն, վստահ որ աւելի թեթեւ կառքի մը պէտք պիտի ունենաս, գոր կրնաս աւելի դիւրութեամբ շալկել երբ տունէն դուրս ելլես, որովհետեւ պատիկները պտոյտներու ընթացքին ընդհանրապէս կը յոգնին կամ կը թմրին եւ անկարող կ'ըլլան քալելու շարունակելու:

\* Երբ երեխադ կառքին մէջ դրած տունէն դուրս հանես, զգոյշ եղիլ, որ կառքին արգելակները լաւ սեղմուած ըլլան, որովհետեւ ան կրնայ դիւրութեամբ սահիլ, նոյնիսկ եթէ միայն քանի մը վայրկեանի համար կեցուցած ըլլաս: Ինչպէս նաեւ պէտք է ուշադրութիւն ընես կառքէն կախած առարկաներու դժանրութեան, որոնք կրնան հաւասարակշռութիւնը խախտել եւ շրջել կառքը:

\* Խաղալիքներու անտուկը իր կարգին շատ կարեւոր չի թուիր սկիզբի շրջանին, սակայն շուտով երեխաներուն սենեակը կը խճողուի բուրդէ պուպրիկներու, խաղալիքներու եւ զանազան իրերու ըն-

դարձակ հաւաքածոյով, որոնք դասաւորման ու կարգաւորման կարիքը կ'ունենան: Հետեւաբար, սենեակին ձեւաւորումը որոշած ժամանակ, նկատի առ անոր յարմարող խաղալիքներու անտուկը:

\* Բուրդէ արջուկ-պուպրիկը այն իրերէն է, որ երեխային կուտայ ապահովութեան զգացումը, պայմանաւ որ զայն ինք անձամբ ընտրէ: Մէկէ աւելի նմոյշներ գնէ այս տեսակէն եւ փոխն ի փոխ գանոնք դիր երեխայիդ անկողինին վրայ, տեսնելու թէ ո՞ր մէկուն հետ աւելի կենսունակ կերպով կը վարուի ան: Յստակ ըլլալէ ետք, նոյնէն հատ մը եւս գնէ, որպէսզի կորսուելու պարագային տազնապի չմատնուի: Հոս հարկ է նշել նաեւ, որ այս արջուկները պէտ է միշտ լուացուին, որպէսզի վրան աղտ եւ փոշի չհաւաքուի:

\* Երբ երեխայիդ հետ ինքնաշարժով տունէն դուրս գաս, ջուրի շիշը, ծծակը եւ արեւէն պաշտպանող գլխարկը չմոռնաս: Իսկ եթէ փափաքես քալելով դուրս ելլել, օդը պաղ եղած ժամանակ հետոյ յաւելեալ վերարկու մը առ եւ միշտ հետոյ յաւելեալ ծծակ մը ունեցիր, որպէսզի զայն օգտագործես, երբ պատահի որ առաջինը պատահմամբ կառքէն վար նետէ:

THE CITY OF GLENDALE  
10th Annual Commemorative Events

**MAN'S INHUMANITY TO MAN**  
Special GTV6 program highlighting the last ten years of Man's Inhumanity to Man events.  
Will air on April 18 through May 9

**ARMENIAN GENOCIDE EVENT**  
Monday, April 25, 2011 | 6:30 p.m. (doors will open at 5:30 p.m.)  
Performances by: Armenian Dramatic Arts Alliance and the Glendale Philharmonic Orchestra under the baton of Maestro Mikael Avetisyan, joined by Glendale Youth Orchestra and International School of Music Choir.  
Keynote speaker: Steve Kurkjian  
Complimentary tickets will be available on April 11 at the Alex Theatre box office.  
Alex Theatre, 216 North Brand Blvd., Glendale, CA (FREE parking at Orange St. Garage.)

**ADDITIONAL EVENTS**  
**BLOOD DRIVE**  
Sunday, April 17, 2011 | 10:00 a.m. - 4:00 p.m.  
K&M Karamanoukian Glendale Youth Center | 211 W. Chestnut St., Glendale, CA  
To make appointments or for more information, contact ANC Glendale at (818) 243-3444

**TIGRAN MANSOURIAN PRESENTS THE MUSIC OF KOMITAS**  
Saturday & Sunday, April 16 & 17, 2011 | 4:00 p.m.  
Glendale Public Library, 222 E. Harvard St., Glendale, CA (818) 548-3288

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈԳԻՒ ՇԱՍԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ՇԵՈՂԱՅՆԵԼ (626) 797-7680

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506